Ազգ
Azg

31 ՕԳՈՍՏՈՍ 2007 ՈՒՐԲԱԹ 157 (3809)

Կոսովոյի խնդրով շփման խումբը խորհրդակցում է

Վիեննայում սկսվել են Կոսովոյի խնդրով շփման խմբի միջազգային միջնորդների անջատ խորհրդակցությունները Բելգրադի եւ Պրիշտինայի ներկայացուցիչների միջեւ: Եվրոմիությունը ներկայացնող գերմանացի դիվանագետ Վոլֆգանգ Իշինգերը Վիեննայում հույս է հայտնել, որ այդ խորհրդակցություններում առաջընթաց ձեռք կբերվի: Շփման խմբի խորհրդակցություններին մասնակցում են նաեւ Ռուսաստանի արտգործնախարարի Բալկաններում հատուկ ներկայացուցիչ Ալեքսանդր Բոցան-Խարչենկոն եւ ամերիկացի դիվանագետ Ֆրենկ Վիսները:

Իրանի միջուկային դոսիեն

Իրանը ողջունել է ՄԱԳԱՏԷ-ի ղեկավար Մոհամմեդ էլ Բարադեի զեկույցը իրանական միջուկային ծրագրի մասին, անվանելով պրոֆեսիոնալ: Ըստ իրանական կողմի, ՄԱԳԱՏԷ-ի զեկույցում նշվում է, որ Թեհրանը լուծել է այդ կառույցի հետ ուրանի հարստացման հետ կապված բոլոր խնդիրները: Նախօրեին արեւմտյան մի շարք լրատվամիջոցներ հաղվածներ էին տպագրել իրանական միջուկային հարցի մասին ՄԱԳԱՏԷ-ի գաղտնի զեկույցից: Ըստ այդ հրապարակումների, Միջազգային ատոմային գործակալությունը Թեհրանին հորդորում է շարունակել համագործակցությունը հարցի վերջնական լուծման համար:

«Լավ, ո՞վ եք դուք, մի՞թե որեւէ պատասխանատվություն չունեք այս երկրում»

Թուրքական բանակին հասցեագրված բաց նամակում այս հարցադրումն է անում «Ենի Շաֆաքի» հեղինակը

ՀԱԿՈԲ ՉԱԲԲԱՆ

Օգոստոսի 28-ին ընտրությունների 3-րդ փուլի քվեարկության արդյունքներով Թուրքիայի նախագահ ընտրված Աբդուլլահ Գյուլի երդման արարողությանը թուրքական զինված ուժերի գլխավոր շտաբի պետ, բանակի գեներալ Յաշար Բույուքանիթի գլխավորությամբ հրաժարվել էին մասնակցել բարձրաստիճան զինվորականները: Նրանք ոչ էլ «Ջանֆայա» պալատում շնորհավորել էին նորընտիր նախագահին, ինչը միանգամայն աննախադեպ էր Թուրքիայի Հանրապետության պատմության մեջ, նաեւ արարողակարգի կողմից խախտում:

Հաջորդ օրը Աբդուլլահ Գյուլը որպես նախագահ մասնակցել է GATA-ի՝ Գյուլհանեի բժշկագիտական զինվորական ակադեմիայի շրջանավարտներին դիպլոմների հանձնման հանդիսությանը: Հատկանշական է, որ նույն Բույուքանիթը, անտեսելով հանդիսությունների բացման համար զինվորական ակադեմիա ժամանած նախագահ Գյուլին, հրաժարվել է նրան պատիվ տալ: Ինչ վերաբերում է զորահրամանատարներին, ապա նրանք էլ նախընտրել են պատիվ տալ ոչ թե Թուրքիայի նախագահին, այլ գլխավոր շտաբի պետին, չմոռանալով ելույթներում հերթական անգամ ընդգծել իրենց հավատարմությունը Քեմալ Աթաթուրքի սկզբունքներին եւ բարեփոխումներին, ինչպես նաեւ երկրի հանրապետական աշխարհիկ կարգերին:

Բարձրաստիճան զինվորականության այս վարվելաձեւը, որն արդեն հաղթավարության տարական կանոնների ոտնահարում է նաեւ, բոլոր հակազդեցություն է առաջ բերել Թուրքիայում:

Տես էջ 3

ՉԵՆ ՈՒՅՈՒՄ, ԹԱՔՅՆԵԼՈՒ ԲԱՆ ՈՒՆԵՆ

ԵԽԽՎ զեկուցողի այցը տարածաշրջան տաղալել է Ադրբեջանը

ԵԽԽՎ գլխավոր քարտուղար Մաթեո Սորինասը օգոստոսի 29-ին ՀՀ ԱԺ նախագահ Տիգրան Թորոսյանին տեղեկացրել է, որ Հարավային Կովկասի մշակութային ժառանգությունն ուսումնասիրելու համար ԵԽԽՎ զեկուցող էդվարդ Օ Հարայի այցը չեղյալ է հայտարարվում: Որպես պատճառ նշվել է ԼՂ մուտքի խնդիրը (այն, ինչի մասին օգոստոսի 28-ին Ադրբեջանը հայտարարել էր):

Ազգային ժողովի հասարակայնության հետ կապերի վարչության երեկ տարածած տեղեկատվությամբ՝ ԱԺ-ն հարկ է համարել պարզաբանումներ ներկայացնել չկայացած այցի վերաբերյալ: Իրողությունը ներկայացնելու անհրաժեշտություն է զգացվել՝ ադրբեջանական լրատվամիջոցների տարածած սխալ տեղեկատվությունը նաեւ աչքի առաջ ունենալով:

Այցի նախաձեռնողը ԵԽԽՎ-ում Հայաստանի պատվիրակությունն է եղել՝ կապված Նախիջեւանի խաչքարերի ոչնչացման հետ: Այցը նախատեսված է եղել դեռ տարիներ առաջ, սակայն մշտապես հետաձգվում էր՝ **«Ազգ»** այդ մասին գրել է: Այս վերջինը նախատեսված էր օգոստոսի 29-ին, Ադրբեջանից: Մանրակրկիտ նախապատրաստվել էր այցի ծրագիրը, եւ ՀՀ-ն, եւ ԼՂՀ-ն իրենց աջակցությունն էին հայտնել զեկուցողին այցի իրականացման համար: Հայաստանը, Վրաստանն ու Ադրբեջանը նախօրոք ուղարկել էին հուշարձանների ցուցակները, որոնք պետք է Հարավային Կովկասի երեք երկրներում, ԼՂՀ-ում եւ Նախիջեւանում ուսումնասիրվեին: Զեկուցող կողմն արդեն ընտրել էր այն հուշարձանները, որոնք պետք է դիտարկվեին, Հայաստան եւ ԼՂՀ այցը կայանալու էր օգոստոսի 29-ին, իսկ մեկ օր առաջ հայկական կողմին պետք է ուղարկվեր այցի ծրագիրը: Սակայն մինչ այդ ստացվեց հանձնաժողովի քարտուղարի՝ այցը չեղյալ համարող նամակը:

Պատճառը, ԱԺ-ից ստացված պարզաբանմամբ, այն է, որ օգոստոսի 28-ին ԵԽԽՎ-ում Ադրբեջանի պատվիրակության ղեկավարը տարածել է մի հայտարարություն, ըստ որի զեկուցողը պետք է Լեռնային Ղարաբաղ այցելի Ադրբեջանի տարածքով, մինչդեռ Հայաստանում ԼՂՀ ներկայացուցչի միջոցով մինչ այդ ճշտվել էին բոլոր մանրամասները. մինչեւ ԼՂՀ տրանսպորտի ապահովումն ու այլ աջակցություն պետք է ցուցաբերեր ՀՀ ԱԺ-ն:

Տես էջ 2

Կենսաթոշակների 60 տոկոսով բարձրացման որոշում

Կառավարության երեկվա նիստում որոշում է ընդունվել բարձրացնել հիմնական (բազային) կենսաթոշակների չափը՝ 4250 դրամից հասցնելով 6800 դրամի, իսկ ապահովագրական ստաժի 1 տարվա արժեքը 230 դրամի փոխարեն սահմանվել է 375 դրամը: Դրանով կենսաթոշակների միջին չափը կբարձրանա 60 տոկոսով եւ կկազմի մոտ 20 հազար դրամ: Սահմանվել է, որ որոշումն ուժի մեջ կմտնի 2008 թ. հունվարի 1-ից: Այս մասին տեղեկանում ենք կառավարության տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչության հաղորդագրությունից:

Ա. Մ.

Շնորհավորանք

ՀՀ ԱԺ նախագահ Տիգրան Թորոսյանը շնորհավորական ուղերձ է հղել նախագահ Ռոբերտ Քոչարյանին՝ ծննդյան օրվա առիթով: Ուղերձում Թորոսյանը համոզմունք է հայտնել, «Ձեր նվիրումն ու կամքը հետայսուհետ էլ կծառայեցնեք հանուն մեր ժողովրդի բարեկեցության ապահովման, Հայաստանի Հանրապետության հզորացման ու Լեռնային Ղարաբաղի հարցի արդարացի լուծման»:

«Ազգ» օրաթերթի խմբագրությունը նույնպես միանում է նախագահին ուղղված շնորհավորանքներին:

Իսկ Սարոյանը կդառնար 99 տարեկան

Իսկ 1908-ի օգոստոսի 31-ին Ֆրեզնո քաղաքում, բիթլիսահայ գաղթականների ընտանիքում, ծնվեց Վիլյամ Սարոյանը: Համաշխարհային գրականության այդ տիտանը դարձավ ամենահայտնի հայազգի գրողը, որին երբեւէ ճանաչել եւ ընդունել էր աշխարհը: Վիլյամ Սարոյանը մահացել է 1981-ին, նրա կյանքի համաձայն, գրողի սիրտը թաղվել է Երեւանում: Այսօր գրողը կլիներ 99 տարեկան:

Տարհանում ՄԱԿ-ի շենքից

Նյու Յորքի ոստիկանության որոշմամբ երեկ գիշեր ՄԱԿ-ի շենքից տարհանվել են բոլոր աշխատողները: Ըստ հաղորդագրության, պատճառը ֆոզքեն կոչվող գազի արտահոսքն է, որը հայտնաբերվել է շենքի հարկերից մեկում: Լրատվամիջոցները հաղորդում են, որ քիմիական նյութերով շշերը հայտնաբերվել են ՄԱԿ-ի գլխավոր գրասենյակի մոտակայքում: Ներկայումս գազի արտահոսքի օջախը լիկվիդացվում է: Քիմիական նյութերը մնացած են եղել 1990-ից, Իրաքից բերված նմուշների ձեւով:

Հրդեհներ Իտալիայում

Ապենինյան թերակղզում հրդեհներն օրեցօր սաստկանում են, կրակը հասել է մինչեւ Իտալիայի մայրաքաղաք: Հրդեհ է բռնկել Հռոմի պատմական զբոսայգիներից մեկում՝ «Վիլլա Ադա»-ում, որը գտնվում է ամենահեղինակավոր շրջաններից մեկից՝ Պարիոլիից ոչ հեռու: Բռնկման մակերեսը կազմել է շուրջ մեկ հեկտար: Ոստիկանությունը կարծում է, որ դա դիտավորյալ հրկիզում է:

Փոփոխություններ Չինաստանում

Չինաստանում իրենց պաշտոններից հեռացվել են միանգամից մի քանի կարեւոր գործակալությունների ղեկավարներ: Երկրի օրենսդիր մարմնի որոշմամբ ֆինանսների նախարարի պաշտոնից հեռացվել է 63-ամյա Ցզին Ժենցինին: Պաշտոնաթող են արվել նաեւ Չինաստանի պետական անվտանգության նախարար Սյոկ Յունյուեն, Գիտության, տեխնիկայի եւ պաշտպանական արդյունաբերության պետական կոմիտեի նախարար Չժան Յունչուանը եւ այլն:

Մայրը վաճառել է նորածին տղաներին

ՀՀ գլխավոր դատախազության քննչական վարչության վարույթում հարուցվել է քրեական գործ՝ նորածին երեխաների առք ու վաճառքի դեպքի առթիվ: Նախաքննությամբ պարզվել է, որ Տավուշի մարզի բնակիչ Ժ. Խեմչյանը 2004-ի դեկտեմբերին Իջեւանի հյուրանոցում ծննդաբերել է տղա երեխա, որին, նախնական համաձայնության գալով Ա. Կիրակոսյանի հետ, մի քանի օր անց 800 ԱՄՆ դոլարով վաճառել է ոմն Արմիկին: Պարզվել է, որ Ժ. Խեմչյանը տղա երեխա է ծննդաբերել նաեւ 2006-ի նոյեմբերին, որին նույնպես, նախնական համաձայնության գալով Տավուշի բնակչուհի Ռ. Սարգսյանի հետ, մի քանի օր անց Հ. Ենգիբարյանի միջոցով վաճառել է Ա. Ղազարյանին: Ռ. Սարգսյանն էլ իր հերթին նորածնին վաճառել է 1000 ԱՄՆ դոլարով, որից 700 դոլարը փոխանցել է Ժ. Խեմչյանին, իսկ մնացած 300-ն օգտագործել սեփական կարիքների համար:

Ջեռք բերված ապացույցների հիման վրա Ժ. Խեմչյանն ու Ռ. Սարգսյանը ներգրավվել են որպես մեղադրյալներ եւ նրանց նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանքը: Նախաքննությունը շարունակվում է:

Մ. Մ.

ԳՊՐՈՑ

Հանրակրթության միջին դպրոցը կունենա 12 անուն նոր դասագիրք եւ 2 նոր առարկա

ՌՈՒԶԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Դասագրքերի շրջանառու հիմնադրամը նոր ուսումնական տարեսկզբի նախաշեմին հանրակրթության միջին դպրոցի համար հրատարակել է 12 անուն նոր դասագիրք, որոնցից երկուսը՝ «Հայրենագիտություն» եւ «Հասարակագիտություն» առարկաների դասագրքերն առաջին անգամ են մուտք գործում դպրոց՝ 12-ամյա կրթության ծրագրային պահանջով: Փաստորեն կարելի է ասել, որ միջին դպրոցի նոր դասագրքերի փաթեթը գրեթե ամբողջական է՝ անցած տարի հրատարակված մաթեմատիկա, մայրենի լեզու եւ ինֆորմատիկա առարկաների դասագրքերին այս տարի ավելացել են բնագիտական ու հասարակագիտական առարկաների դասագրքերը, հաջորդ տարի դրանց կավելանան օտար լեզվի դասագրքերը, ինչպես նաեւ ձեռքի աշխատանքի եւ ռազմագիտության ձեռնարկները: Դրանով միջին դպրոցի նոր դասագրքերի ստեղծման գործը կհամարվի ավարտված եւ մոտակա կհայտարարվի ավագ դպրոցի նոր դասագրքերի հրատարակման համար:

Հիմնադրամի փոխտնօրեն Գարեգին Գարեգինյանի համոզմամբ, նոր դասագրքերը լիովին համապատասխանում են այսօրվա պահանջներին, գրավիչ են, գունագարդ, տպագրված բարձրորակ թղթի վրա, գեղեցիկ շարվածքով: Իսկ թե որքանով են մատչելի բովանդակային առումով, դեռեւս վաղաժամ է ասել, չնայած դրանք փորձարկվել են դպրոց-կենտրոններում, դասընթացների ժամանակ ճնշարկել ուսուցիչների հետ եւ նրանցից ստացած առաջարկներն ու դիտողությունները ներկայացրել հրատարակիչներին: «Կարծում եմ, նոր դասագրքերը բեռնաթափված են ակադեմիական ոճից, դա այնքան զգալի չէ, ինչպես նախկին դասագրքերում: Պահպանել ենք այլընտրանքային դասագիրք ունենալու մոտեցումը՝ եթե անցած տարի 2 տարբերակ ուներ 3 դասագիրք, այս տարի՝ 7 դասագիրք: Օրինակ, հայրենագիտություն նոր առարկայի 2 դասագրքերից մեկի հեղինակը Էդուարդ Դանիելյանն է, մյուսինը՝ Արմեն Հովսեփյանը: Ժամանակը ցույց կտա, թե դրանցից որը ճնշություն կբռնի եւ կընդունվի որպես լավ դասագիրք:

Տես էջ 2

Պ. Հայրիկյան. «Եթե Սերժ Սարգսյանն ընդունի ժողովրդավարացման ծրագիրը, ապա պատրաստ եմ պաշտպանել նույնիսկ նրա թեկնածությունը»

«Կոնգրես» հյուսանոցում օգոստոսի 28-ին ասել-լսելու՝ ջեռմ մթնոլորտում մտքեր փոխանակելու նպատակով հանդիպել են ԱԻՄ, ԱՄ, ՀԺԿ, ՕԵԿ, ՍԴՀԿ, ԺՈՒԿ, ԱԺԿ առաջնորդները: Այս մասին «Հայացք» ակումբում երեկ տեղեկացրեց հանդիպումները նախաձեռնող ԱԻՄ նախագահ Պարույր Հայրիկյանը: Հանդիպմանը մասնակցության թույլտվություն չի սացել «Ժառանգություն» կուսակցության ֆորմալ ղեկավար Վարդան Խաչատրյանը, ինչի որ կուսակցության իրական առաջնորդը Ռաֆֆի Հովհաննիսյանն է: Ոչ առաջնորդների ներկայությունը հաջորդելիք հանդիպումներին չի բացառվի, եթե միայն լուրջ պատճառ կա առաջին դեմքի բացակայության եւ նախապես տեղեկացումն էլ արված է: Հայրիկյանի տեղեկացմամբ՝ ՀՀՇ վարչության նախագահ Արարատ Զուրաբյանը չի մասնակցել իրեն անհայտ պատճառով, իսկ վերջինս մամուլին հայտնել է, որ չի մասնակցում Երեւանից բացակայելու պատճառով: Նույնն է հանդիպմանը Արամ Գասպարի Սարգսյանի չմասնակցելու պատճառը, ինչի մասին Սարգսյանը հայտնել է Հայրիկյանին, իսկ Արամ Զավենի Սարգսյանը մամուլի միջոցով հաղորդել է, որ չի մասնակցում սկզբունքորեն: Այս մոտեցումը Պարույր Հայրիկյանը «գժական» է համարում ու կարծում, որ այդ որակումը սազական է քաղաքական այն գործչի մոտեցմանը, ով զբաղվում է քաղաքականությամբ ու հայտարարում է, թե սկզբունքորեն չի հանդիպի իր գործընկերների հետ: Բայց այդ մոտեցումն, ըստ ԱԻՄ նախագահի, չի պատկանում Արամ Զավենի Սարգսյանին, այլ մամուլի խեղաթյուրում է:

Հավաքները նախաձեռնողի իրավունքով ԱԻՄ նախագահը հայտարարեց, որ չի ցանկանում դրանք անվանել ընդդիմադիրների հավաք, քանի որ դրանք ժողովրդավարական ուժերի հավաքներ են եւ արդեն այդպես էլ ընկալում են մասնակիցները: Հավաքներն, ի դեպ Հայրիկյանի հավաստմամբ, գաղտնիություն չեն կրում եւ լրագրողներին չհրավիրելը բացատրվում է մամուլում իրողությունները խեղաթյուրված ներկայացնելու մտավախությամբ:



Հանդիպումներում որեւէ գաղտնիքի առկայություն բացառելով հանդերձ, ԱԻՄ նախագահը խուսափեց խոսել մասնակիցների առաջարկներից, այդպես էլ չասելով, թե ով է հանդիպման ընթացքում առաջարկել մասնակցության հրավեր ուղարկել իշխանական թեւի կուսակցություններին:

ԱԻՄ նախագահն իրեն առնչվող տեղեկությունները մանրամասնեց ակտիվորեն՝ Հայրիկյանն առաջարկում է Հայաստանը դարձնել աշխարհի ամենաժողովրդավարական երկիրը: Այս ծրագրի շուրջը քաղաքական ուժերի համախմբման դեպքում Հայրիկյանն իմաստավորված կհամարի նախագահի ընտրությանն իր մասնակցությունը, անգամ մեկ ուրիշ լիդերի աջակցելու եղանակով: Հակառակ դեպքում նախագահի ընտրությունն, ըստ ԱԻՄ առաջնորդի, կդառնա մանր-մունր գզվռտոց, որին ոչ իր՝ Պարույր Հայրիկյանի, ոչ էլ ԱԻՄ մասնակցությունը իմաստ չի ունենա: Համարելով, որ իր առաջարկած Ժողովրդավարացման ծրագիրը եթե ընդունի Սերժ Սարգսյանը, ապա ինքը պատրաստ է պաշտպանելու անգամ Սերժ Սարգսյանի թեկնածությունը: Այս կերպ պատասխանելով կոպաշտանի՝ արդյոք Լեւոն Տեր-Պետրոսյանի թեկնածությունը:

ԱԻՄ ղեկավարի տեսանկյունից քաղաքական ուժերի առաջնորդները հավաքներին մտքեր են փոխանակում եւ հեռանում հարստացած: Հավաքներին մասնակցության ձեւաչափը սվերային կառավարություն համարելը, որն ունի ընդդիմության ինքնակվող նախընտրական պլատֆորմ եւ ֆինանսական աջակցություն, Պարույր Հայրիկյանի կարծիքով, վաղաժամ է, սակայն զարգացումները կարող են տանել հենց դրան: Ֆինանսական հարցերի լուծումն էլ հաղթահարելի է, ըստ բանախոսի, չնայած դեռ ուղղակի ինքնակումներ չեն եղել, բայց ժողովրդավար ուժերի բեւեռի ձեւավորումից հետո շատերը ներդրումով կաջակցեն այդ բեւեռին:

«Քննարկումների փուլում ենք: Այդ քննարկումների նպատակն այն չէ, որ հավաքվածներն անպայման հանդես գան միասնական: Ես այդ ամենը նախաձեռնել եմ, որպեսզի չկրկնվի խորհրդարանական ընտրությունների ժամանակ տեղի ունեցածը: Բոլորը ուզում էին միասնական թեկնածու, բոլորը իրար հետ իբր թե ժողովներ էին անում առանձին-առանձին, վերջում պարզվեց ոչինչ, ըստ էության, ոչինչ չմնաց: Եվ պարզվեց, որ բոլորն ուզում էին, բայց մեղավորն ով էր, ոչ ոք չիմացավ», լրագրողների հետ հանդիպման ավարտին կրկին ընդգծեց Պարույր Հայրիկյանը:

Անդրադառնալով Ժողովրդավարական ուժերի երրորդ հանդիպման ժամկետին, բանախոսը հայտնեց, որ այն արդեն իսկ կարելի է սկսված համարել, քանի որ «Կոնգրեսի» հանդիպումից հետո արդեն իսկ ընթանում են փոքր ձեւաչափով հանդիպումներ: Հանդիպման ժամկետը ընդհանուր որոշելիք է, ըստ հանդիպման նախաձեռնող Պարույր Հայրիկյանի, որը հոգում է նաեւ դահլիճի վարձակալության ծախսերը:

ԼԵՎՈՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հանրակրթության միջին դպրոցը կունենա 12 անուն նոր դասագիրք եւ 2 նոր առարկա

1-ին էջից

Տարիներ հետո գուցե այդ դասագրքերը որոշակի փոփոխության ենթարկվեն, եթե իհարկե, դրա անհրաժեշտությունը առաջանա: Կան դասագրքեր, որոնք այլընտրանքային տարբերակ չունեն, ինչպես, օրինակ, Խլղաթյանի 7 - 9 դասարանի հայոց լեզվի դասագիրքը, նաեւ հանրահաշվի եւ պատմության դասագրքերը: Դա նշանակում է, որ կամ այլ տարբերակ չի ներկայացվել առարկայական հանձնաժողովին, կամ ներկայացվել է, բայց չի հաղթահարել պահանջվող շեմը», ասում է Գարեգինյանը: Առարկայական հանձնաժողովները ստեղծվում են կրթության եւ գիտության նախարարի հրամանով, դրանում ընդգրկված մասնագետների մեջ այժմ կան նաեւ ուսուցիչներ, որպեսզի դասագրքերը քննության ենթարկվեն նաեւ նրանց հայացքով եւ սուր քննադատությունները նվազեն: «Վերջին 5-6 տարիների ընթացքում միայն մի դեպք է եղել, երբ դասագիրքը կտրականապես չի ընդունվել դպրոցներում, խոսքս 3-4-րդ դասարանների անգլերենի դասագրքի մասին է: Որեւէ այլ դասագրքի մասին խիստ բացասական կարծիք չի եղել, այլ միայն դիտողություններ, առաջարկներ, որոնք հաշվի առնելով տվյալ դասագիրքը զգալիորեն փոխվել է», նշում է Գարեգինյանը, հավելելով, որ ուսուցիչներին հնարավորություն է տված ազատորեն արտահայտելու իրենց դժգոհությունները 4 տարին մեկ նրանց բաժանվող հարցաթերթիկներում:

Խնդիրն այն է, որ նույն դասագրքի վերաբերյալ ուսուցիչները հաճախ արտահայտում են իրարամերժ կարծիքներ, որի դեպքում անիմաստ է դառնում նոր մրցույթ հայտարարելն ու շտկումներ անելը:

Դասագրքերի շրջանառու հիմնադրամը պատրաստ է հրատարակելու բոլոր այն դասագրքերը, որ պատվիրում է դպրոցը: Մեր այն հարցին, թե «Միջին դպրոցի համար չի՞ նախատեսվում հրատարակել բարեկիրթ վարվեցողության ձեռնարկ, որի կարիքը մեր հասարակությունն իրոք ունի», Գարեգինյանը պատասխանեց. «Հանրակրթական ծրագրում այդպիսի առարկա չկա, հետեւաբար չկա նաեւ այդպիսի դասագիրք: Սակայն կրթության ազգային ինստիտուտը կարող է հրատարակել, եթե, իհարկե, դպրոցը ցանկություն հայտնի այդպիսի դասագիրք ունենալու: Մենք դասագրքերի մրցույթը անցկացնում ենք պատվերի համապատասխան, իսկ 4 տարին մեկ հարցում ենք կատարում գրքի մատչելիության, բովանդակային փոփոխությունների անհրաժեշտության մասին, քանի որ դասապրոցեսում ամենակարեւորը դասագիրքն է: Այն պետք է լինի պարզ ու հստակ, որպեսզի սովորողը գիտելիքներ ձեռք բերելու հնարավորություն ունենա առանց ուսուցչի կամ որեւէ մեկի օգնության: Տավոք, դասագիրք գրողները այս հանգամանքի մասին երբեմն չեն մտածում: Այդ բացը մենք իրոք ունենք»:

Միջին դպրոցի նոր դասագրքերի շարադրողները բավականին գրավիչ են, տրամադրող գիրքը ձեռքն առնելու եւ թերթելու: Դրանք թեթեւակի աչքի անցկացնելով կարելի է ասել, որ շարադրանքը բավականին հստակ է, դյուրըմբռնելի, զերծ ավելորդաբանություններից, երկարունչ նախադասություններից: Դասագրքերը հրատարակել են հիմնադրամի անցկացրած մրցույթում հաղթած 9 հրատարակչությունները՝ «Տիգրան Մեծ», «Անբարես», «Լույս» «Մամիկոնյան Արմենիա», «Զանգակ», «Աստղիկ», «Էդիս Պրինտ», «Արեւիկ» հրատարակչությունները: «Նախկինում այդ մենաշնորհը տրված էր միայն «Լույս» հրատարակչությանը, հիմա այդ հնարավորությունը տրված է բոլոր նրանց, ովքեր ունեն բարձրորակ դասագրքեր հրատարակելու համար անհրաժեշտ միջոցները»:

ՀԱՅԱՏՔ

Քաղաքական շոգ ու ծույլ ամառվանից դեպի...

Քաղաքական դաշտում առայժմ «կրակոցներ» չկան: Անդորր է, բայց պրկված անդորր: Այն կուսակցությունները, որոնք տանուլ տվեցին խորհրդարանական ընտրություններում, դեռեւս լռում են: Անհայտ է՝ նախապատրաստվո՞ւմ են եւ ինչպե՞ս են նախապատրաստվում առաջիկա նախագահական ընտրություններին: Ընդամենը կցկտուր տեղեկություններ են հայտնվում վերջիններիս հանդիպումների մասին: Դրանք ամենից առաջ ճանաչողական հանդիպումներ են. ուսումնասիրում են միմյանց՝ ո՞վ ինչ կարող է, հակառակորդ բարեկամն ինչի՞ է ընդունակ:

Իշխանական կուսակցություններն էլ իրենց հերթին են լռելով սպասում:

Միայն մեկ-մեկ շոգ ամառվա ծուլությունը ճեղքում է հանրապետության վարչապետը, որ պաշտոնական աշխատանքային այցեր է կատարում հանրապետության մարզեր, հանդիպում է բնակչության հետ: Եվ այս դեպքում անհայտ է՝ հանդիպումներում պաշտոնական-աշխատանքայի՞ն է շաս, թե ոչ պաշտոնական խարազչությունը:

Շահագրգիռ մարդկանց համար Սերժ Սարգսյանն արդեն հանրապետության նախագահ է: Ընդամենը ժամանակի հարց է, որ պաշտոնապես անցնի գործի: Իսկ ում համար անընդունելի, մերժելի է երկրի նախագահի Սերժ Սարգսյան տարբերակը, լռում են: Նրանք սպասում են: Սակայն դեռեւս պարզ չէ, թե ինչի են սպասում: Այն դաշտը, որտեղ կցանկանային իրենց տեսնել, պարզապես գոյություն չունի: Ընդդիմությունը տեղաշվության մեջ է: Դեռ որքան կտեւի այդ վիճակը, անհայտ է: Կամ գուցե դաժան ֆիասկոյից հետո պարզապես այլեւս չկարողանան ձեռնամուխ լինել ակտիվ եւ արդյունավետ քաղաքական գործողությունների:

Իրադարձությունների նման զարգացման դեպքում մարդիկ պարզապես չեն զգա ոտի տակի հողը, որի վրա կանգնելով մասնակից կդառնային իրենց երկրի քաղաքական կյանքի կառավարմանը: Ընդդիմության բացակայությամբ, երբ խախտվում է քաղաքական կյանքի հավասարակշռությունը, առողջ քաղաքական ընկալումներից դեպի բարոյալքում կամ քաղաքական դեգրադացիա մեկ քայլ է:

Ինչպես կզարգանան իրադարձությունները, պարզ կլինի ամենակարճ ժամանակում. կձեւավորվի՞ առողջ ընդդիմություն, որն իր հետեւից կտանի ընդդիմադիր տրամադրությամբ մարդկանց, թե՞ վերջիններս, չկարողանալով իրացնել սեփական քաղաքական հայացքները, ասիճանաբար կվերածվեն հիվանդագին դժգոհության այսօր՝ ամորֆ, բայց վաղը՝ պայթյունավտանգ կուտակիչների:

ԳՈՀԱՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Դպրոցը վերանորոգվեց

Ինչպես հաղորդում են Հայաստանում ԱՄՆ-ի դեսպանությունից, Միացյալ Նահանգների պետական դեպարտամենտի ֆինանսավորմամբ Միջազգային օգնություն եւ զարգացում ընկերության հայկական մասնաճյուղը վերանորոգել է Երեւանի թիվ 16 դպրոցը: Վերանորոգված դպրոցի բացման արարողությանը մասնակցել է Հայաստանում ԱՄՆ-ի դեսպանության գործերի ժամանակավոր հավատարմատար Ռոտրլֆ Փերինան:

ԵՏԽՎ զեկուցողի այցը տարածաշրջան տպալել է Ադրբեջանը

1-ին էջից

Ադրբեջանը, փաստորեն, տպալել է այցը՝ վերջին պահին պայմաններ դնելով զեկուցողի առջեւ. «Եվ սեթեւեթանքները, թե սա պարզապես հերթական հետաձգումն է, որ տարածվում են ադրբեջանական մամուլով, չեն համապատասխանում իրականությանը», ասված է ԱԺ պարզաբանման մեջ:

ԱԺ-ից սացված հաղորդագրությունը նաեւ ուշադրություն է հրավիրում այն հանգամանքի վրա, որ թեեւ Ադրբեջանի պատվիրակությունները միջազգային տարբեր կազմակերպություններում հերյուրանքներ են տարածում իբր Հայաստանի կողմից ադրբեջանական հուշարձանները ոչնչացնելու վերաբերյալ, սակայն Հայաստանում զեկուցողը ցանկացել էր տեսնել միայն մեկ մահմեդական հուշարձան՝ պարսկական «Կապույտ մզկիթը», ինչը նշանակում է, որ հերյուրանքներից անդին ադրբեջանցիները չեն կարող ներկայացնել Հայաստանում որեւէ «ադրբեջանական» հուշարձանի ոչնչացման մասին փաստ: ԼՂ-ի տարածում էլ ուսումնասիրության համար նշվել են միայն Շուշիի մզկիթը, Փանահուանի պալատը, գրադարաններ, թանգարաններ, այդ եւս վկայում է ադրբեջանցիների հերյուրանքների մասին ԼՂՀ-ում եւ Հայաստանում իբր «ադրբեջանական» հուշարձանների ոչնչացման վերաբերյալ:

«Ակնհայտ է, որ ադրբեջանցիներն ամեն կերպ խոչընդոտում են զեկուցողի այցը տարածաշրջան, որովհետեւ այդ ընթացքում բացահայտվելու է, որ թե՛ Նախիջեւանի Ինքնավար Հանրապետությունում, թե՛ Ադրբեջանում բազմաթիվ հայկական հուշարձաններ են ոչնչացվել եւ այժմ էլ ոչնչացվում են, եւ ադրբեջանցիների հայտարարությունները պարզապես հերյուրանքներ են», ասված է ԱԺ-ից սացված հաղորդագրության մեջ:

Այցի հետագա ճակատագիրը կորոշվի ԵՏԽՎ հանձնաժողովի նիստի ժամանակ:

Մ. Խ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության 16 տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 0010 Հանրապետության 47
Ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՐԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Լրագրողների սենյակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայություն / հեռ 582483
Շուրջօրյա լրահաւաք ծառայություն / հեռ 529353
Համակարգչային շարուածը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

ԱԶԳ

ԸՆԹՍԱՑԻԿ

Հայաստանում ժամանակակից կաթի համակարգի առդյունավետությունը երեկ ֆնարկման թեմա էր Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոնում (ՌԱՀՀԿ) ոլորտի մի շարք ընկերությունների եւ պետական մարմինների ներկայացուցիչների մասնակցությամբ:

Հրավիրյալների մի զգալի մասը թերեւս չէր կարետրել թեման կամ էլ ռազմավարական եւ ազգային հետազոտությունների կենտրոնում դրա ֆնարկումը, ուստի բացակայում էր: Սկզբից ելեթ շատ զանգի «պատճառով» ինչպես եկել էր, այնպես էլ հեռացավ սեմինար-ֆնարկման առաջին բանախոսը՝ ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարարության կապի վարչության պետ Գետրգ Բալոյանը, որ պիտի ներկայացներ կապի համակարգը Հայաստանում եւ պետական քաղաքականությունն ու զարգացման հեռանկարները:

Կապի ոլորտում ձեռքբերումների առնչությամբ երանելի սովետական ժամանակների հիշատակումից հետո ներկայացվեց առավել հետաքրքրական, թեեւ մեթոդաբանության առումով անհասկանալի պահեր պարունակող վերլուծություն Հայաստանում հեռախոսակապի սակագների ցուցանիշների առնչությամբ, որ իրականացրել է ՌԱՀՀԿ-ը՝ հավաքելով եւ մշակելով հեռախոսակապի սակագներին առնչվող տեղեկություններ ինտերնետային բաց աղբյուրներից ու լրատվամիջոցների հաղորդագրություններից: Համեմատվել են հայաստանյան եւ Վրաստանում, Ադրբեջանում, Մոսկվայում՝ որպես առանձին միավոր եւ Միացյալ Նահանգներում նույն սակագների ցուցանիշների հետ:

Որոշ հետաքրքրական դիտարկումներ արժանի են ուշադրության: Մասնավորապես, նշված երկրներից միայն Հայաստանում է ամսական բաժանորդային վճարի կտրվածքով տարբերակում դրվում իրավաբանական եւ ֆիզիկական անձանց միջեւ: Ինչ վերաբերում է ֆիքսված ցանցում րոպեավճարին, ապա վերլուծության համաձայն, այդպիսի ցուցանիշ չկա ինչպես Ադրբեջանում, այնպես էլ Վրաստանում, իսկ Մոսկվայում եւ ԱՄՆ-ում այդ ցուցանիշը նվազագույնը երեք անգամ փոքր է Հայաստանում կիրառվող րոպեավճարի չափից:

Ֆիքսված ցանցից դեպի շարժական ցանց մեկ րոպեի արժեքով, դժբախտաբար, ռեկորդակիր ենք ընտրված երկրների համեմատությամբ: Դիտարկված ցուցանիշները առավել լավ են արտահայտում իրավիճակը միջին ախտավարձի համեմատությամբ: Հայաստանում միջին ախտավարձի՝ 197 ԱՄՆ դոլարի 19,5 տոկոսն են կազմում ֆիզիկական անձի ֆիքսված հեռախոսակապի ծախսերը, Վրաստանում՝ 115 դոլարի 22 տոկոսը: Ադրբեջանում միջին ախտավարձը կազմում է 196 դոլար, որի 8,9 տոկոսն են ֆիզիկական անձի ֆիքսված հեռախոսակապի ծախսերը, իսկ Մոսկվայում 500 դոլարից այդ նպատակով ծախսվում է միայն 4 տոկոսը: Միացյալ Նահանգների ցուցանիշները երազային կատեգորիայից են՝ միջին 3120 դոլար ախտավարձից այդօրինակ ծախսերի համար հատկացվում է 0,7 տոկոս:

Մի խոսքով, սակագների ցուցանիշների վերլուծությունից կարելի է եզրակացնել, որ անգամ տարածաշրջանի երկրների համեմատությամբ Հայաստանը դեռ անելիքներ շատ ունի:

Պարզվում է, անելիքների մեծ մասը դեռ չենք սկսել նաեւ տեղեկատվական անվտանգության ոլորտում: Տնտեսական գիտությունների դոկտոր **Թաթուլ Մանասերյանի** վկայությամբ, որպես տնտեսական անվտանգության մի հատված՝ տեղեկատվական անվտանգության առումով էլ Հայաստանը խոցելի երկիր է: Ըստ Մանասերյանի, դա առավել կարետրվում է նաեւ այն պատճառով, որ ներկա պայմաններում բոլոր երկրները մի կողմից լինելով բաց, մյուս կողմից՝ մշտապես մտահոգ են սեփական անվտանգության հարցերով:

Հայաստանում տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը գերակա է հռչակվել պետականորեն, սակայն, Թաթուլ Մանասերյանի կարծիքով, որեւէ քայլ չի ձեռնարկվում այդ գերակայությունը ապահովելու համար: Մինչդեռ մեր հարեւան երկրներում հենց այս ոլորտի վրա շեշտադրումները հստակ գծագրվում են նաեւ պետական քաղաքականության, աջակցության, պետբյուջեից հատկացումների ձեւով:

Ինչպես, Մանասերյանի խոսքերով, որեւէ ֆիլտրի կամ նման մեխանիզմի կիրառությունից զուրկ է, օրինակ, Ազգային ժողովի ցանցը, որ ամենայն հանգստությամբ կարող է տեղեկատվության աղբյուր ծառայել՝ վտանգելով ընդհուպ ազգային անվտանգությունը: Նմանօրինակ անմխիթար վիճակում է նաեւ Հայաստանի կառավարության ցանցը:

Սեմինարի ֆնարկման վերջին ասպեկտը վերաբերում էր Հայաստանում ինտերնետի ներկա վիճակին, զարգացման ուղղություններին, որ ներկայացրեց «Արմինկո» ընկերության տնօրեն **Անդրանիկ Ալեքսանյանը:** Այսպես որակված «հունական Արմենտելի» անորակ ծառայությունների հիշատակումից զատ Ալեքսանյանը նշեց, որ նման իրավիճակը Հայաստանը հետ գցեց մի տասը տարով: Միեւնույն ժամանակ, այդ պայմաններում էլ ինտերնետը Հայաստանում զարգացել է, քանի որ կային խելացի մարդիկ, բայց եւ կարող էր զարգացման ավելի բարձր մակարդակի վրա լինել, եթե չլինեին արմենտելյան սակագներն ու անորակությունը: «Արմինկո» ընկերության տնօրենի վկայությամբ, դեռեւս մեկ տարի առաջ ինտերնետի սակագները Հայաստանում ախտարհում ամենաբարձրներից էին:

Ինչ վերաբերում է այդ ոլորտի մասնագետներին, ապա Ալեքսանյանի մատուցմամբ, Հայաստանում կան մոտ 5000 մասնագետներ, որոնք տեղափոխվում են մի ընկերությունից մյուսը, իսկ նոր կադրեր շատ քիչ են պատրաստվում: Ուստի պետք է կարետրել բարձրակարգ ուսուցիչներ ունենալու խնդիրը, մասնագետների ապահովման հարցի լուծումը սկսել դպրոցից, այդպիսով ապահովել մրցակցություն, այլապես ինչպես ներկայումս, այդպես էլ հետագայում Հայաստանից կհեռանան նորմալ մասնագետները:

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կաթի թանկ լինելը Հայաստանում դեռ մնում է խնդիր

ՏՏ ոլորտի զարգացումը միայն հռչակելով չէ, կոնկրետ քայլեր են պետք

Երթուղային ավտոբուսներում պետք է լինեն բարձրախոս եւ մուտք

Համաձայն կառավարության ընդունած կարգի

Հայաստանից դուրս ավտոմոբիլային տրանսպորտով բեռնափոխադրումների իրականացման եւ Հայաստանի տարածքում ավտոմոբիլային տրանսպորտով ուղեւորափոխադրումների կազմակերպման կառավարության երեկ ընդունած կարգերը լրագրողներին ներկայացրեց տրանսպորտի եւ կապի նախարար Անդրանիկ Մանուկյանը:

Հայաստանից դուրս բեռնափոխադրումների իրականացման կարգն, ըստ նախարարի, ընդունվել է նպատակ ունենալով հեշտացնել մեր փոխադրումների գործը: Համաձայն այդ կարգի, երկկողմ պայմանագրերի հիման վրա տրվում են թույլտվություններ, որոնք իրավունք են տալիս երկու պետությունների փոխադրողներին աշխատել եռթեւեկել միմյանց տարածքով: Անդրանիկ Մանուկյանն ասաց, որ միայն երեք պետություններ կան, որոնց տարածքներում հայ փոխադրողները կարող են առանց թույլտվության, ըստ կնքված միջպետական պայմանագրերի, եռթեւեկել: Այդ երկրներն են Վրաստանը, Ռուսաստանը եւ Ղազախստանը: Նախարարն ավելացրեց, որ Հայաստանի օրենսդրությունը փոխադրումների ոլորտում լիբերալ է, ինչը գալիս է մեր շրջափակված լինելուց: Այլ երկրների փոխադրողները, վճարելով պետական տուրքերն ու հարկերը, կարող են անցնել մեր երկրի տարածքով, մինչդեռ կան երկրներ, որ հատուկ թույլտվություն են պահանջում դրա համար: Որպես օրինակ նա նշեց, որ հայկական մեքենաները չեն կարող եռթեւեկել Թուրքիայով, մինչդեռ թուրքական մեքենաները եռթեւեկում են Հայաստանով:

Ինչ վերաբերում է Հայաստանի տարածքում ուղեւորափոխադրումներին, ապա այդ մասին ընդունված կարգով սահմանվել են ուղեւորափոխադրումներ իրականացնելու համար ավտոբուսների եւ միկրոավտոբուսների առջեւ դրվող չափանիշները, մասնավորապես նրանց կահավորանքը, տեխնիկական պայմանները, չվացուցակները, աշխատանքի ռեժիմը:

Անդրանիկ Մանուկյանը հայտնեց, որ համաձայն այդ կարգի, ավտոբուսներում պետք է նշվեն իրենց համարները, վարորդի անուն-ազգանունը, կազմակերպության անվանումը, որին պատկանում է ավտոբուսը: Ավտոբուսները պետք է լինեն մաքուր, կահավորված բարձրախոսով, դրանցում պետք է լինի մուտք՝ վթարի դեպքում ապակին կոտրելու եւ դուրս գալու համար: Նույն պահանջները, բացի բարձրախոսի առկայությունից, դրված է նաեւ միկրոավտոբուսների առջեւ:

Չվացուցակների սահմանման մասին, ի պատասխան «Ազգի» հարցի, տրանսպորտի եւ կապի նախարարն ասաց, որ, համաձայն կարգի, դրանք սահմանում են Երեւանի ավտոբուսային եւ միկրոավտոբուսային երթուղիների համար Երեւանի քաղաքապետարանը, մարզերում՝ մարզպետարանները: Անդրանիկ Մանուկյանը նաեւ հայտնեց, որ հիշյալ կարգերը ուժի մեջ են մտնում դրանք հրապարակելուց 10 օր հետո:

ԱՐԱ ՏԱՐՏԻԲՈՍՅԱՆ

Երկաթուղին կառավարման կհանձնվի եկող տարվա հունվար-փետրվարին

Լրագրողների հետ զրույցի ժամանակ տրանսպորտի եւ կապի նախարար Անդրանիկ Մանուկյանը երեկ տեղեկացրեց, որ «Հայկական երկաթուղու» կառավարման հանձնելու մրցույթը տեղի կունենա հոկտեմբերին: Նոյեմբեր-դեկտեմբերին կբացվեն առաջարկությունների փաթեթները, իսկ հունվարին, «ամենաուշը՝ փետրվարին» հայտնի կդառնա մրցույթը շահած ընկերության անվանումը:

Ա. Մ.

«Հայփոստը» 2 մլրդ դրամի վնաս է կրել

Այդ թվում ներկայիս փոխնախարարի՝ ընկերության տնօրեն եղած ժամանակահատվածում

Համաձայն «Հայփոստ» ընկերության տարածած հաղորդագրության, անցած 5 տարիների ընթացքում այս ընկերությունը կորցրել է 2 մլրդ դրամ՝ ավտոտնտեսության շահագործման եւ կառավարման խախտումների պատճառով: Այդ կապակցությամբ ընկերության ներկայիս կառավարիչ հոլանդական «Հայփոստ տրաստ մենեջմենտը» դիմել է ոստիկանություն: Տեղեկատվության մեջ նաեւ նշվում է, որ խախտումները թույլ են տվել մի շարք աշխատակիցներ եւ ղեկավար անձնակազմը, որ դրանք առնչվում են բենզինի գնման եւ օգտագործման, մեքենաների շահագործման, վերանորոգման եւ սպասարկման ոլորտներին: Սակայն մեղավորների անունները չեն հիշատակվում: Այս կապակցությամբ նշենք, որ նախորդ 5 տարիների ընթացքում «Հայփոստի» գլխավոր տնօրեն երկար ժամանակ եղել է տրանսպորտի եւ կապի ներկայիս փոխնախարար Վրույր Առաքելյանը: Մեր այն հարցին, թե արդյոք նա նույնպես որեւէ կերպ առնչվո՞ւմ է այս չարաշահումներին, ընկերության կապի ապահովման գծով կոորդինատորը խուսափեց պատասխանելուց, ասելով, որ իրավապահ մարմինները հետաքննություն են իրականացնում:

Ասվածին մնում է միայն ավելացնել, որ յուրաքանչյուր նախարարություն, գերատեսչություն կամ պետական ձեռնարկություն անցյալում եւ ներկայում նմանատիպ չարաշահումներ են կատարվում, որոնք սակայն երբեւէ կոչված չեն բացահայտվելու:

Ա. Մ.

Չար կատակ

Այս օրերին, երբ դպրոցներում վերջին շտկումներն ու հանձնարարականներն են արվում, անսիրտ ու անտաք մի մարդ չար կատակ է անում Երեւանի Սարյան 23 հասցեում գտնվող թիվ 29 միջնակարգ դպրոց զանգահարելով ու ահաբեկելով, որ շենքում պայթուցիկ է տեղադրված:

«Ազգը» լուրը լսելուն պես եղավ դպրոցում, ուր ընթանում էին համապատասխան որոնողական աշխատանքները վարժեցված շների, փրկարարների, ազգային անվտանգության ու ոստիկանության աշխատակիցների կողմից: 1 ժամ 30 րոպե հետո պարզվեց, որ ահազանգը կեղծ էր: Փաստի առթիվ հարուցվել է քրեական գործ եւ իրականացվում են համապատասխան միջոցառումներ հանցագործին հայտնաբերելու համար:

Երբ զրուցում էինք դպրոցի տնօրեն Ռուզաննա Սարուխանյանի հետ, տեղեկացանք, որ դպրոցում ժամը 11-ին հրավիրվել էր մանկավարժական խորհրդի նիստ եւ ընդամենը 15 րոպե առաջ դպրոցի գործավարի հեռախոսով միջին տարիքի մի տղամարդ հայտնել է, որ «դպրոցում պայթուցիկ է տեղադրված, էվակուացրեք»: Տկն Սարուխանյանը մի պահ չի հավատացել, սակայն անմիջապես տեղեկացրել է իրավապահ մարմիններին ու մինչ նրանց գալը դպրոցն արագ դատարկվել է, հեռացել են նույնիսկ դպրոցի բակում կառուցվող օժանդակ շինությունների աշխատողները:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱՍԿԱՐՅԱՆ

«Լավ, ո՞վ եք դուք, մի՞թե որեւէ ...

1-ին էջից

Միաժամանակ առիթ է տվել միջազգային առաջնակարգ լրատվամիջոցներին, որ հետեւյալ հարցադրումն անեն. «Սա հուշագրի նո՞ր տարատեսակ է, թե՞ դիմադրություն ընդդեմ ժողովրդի»: Ինչ պատճառ էլ ունենա այս վարվելաձեւը, թուրքական բանակը դրանով ակամա խոստովանում է երկրում դիրքերի զիջման անխուսափելիությունը եւ ընդունում, որ «Չանքայայում» նախագահի աթոռին բազմելը, վարչապետ Էրդողանի դիպուկ արտահայտությամբ, չի կարող արտոնյալ ընտրախավի մենաշնորհը լինել:

Բանակի կամակորություններին ցուցաբերվող հակազդեցության առումով չափազանց ուշագրավ է «Ենի շաֆաքի» հեղինակ Ալի Բայրամօղլուի բաց նամակը, որը «Լավ, դուք ո՞վ եք» խորագրով հրապարակվել է այս թերթի օգոստոսի 30-ի համարում: Ահա թե ինչ է գրել Բայրամօղլուն. «Ցմասնակցելով ընտրված նախագահի երդման արարողությանը, ոչ միայն ընդունված կարգն եք խախտում, այլեւ արհամարհում եք նախագահական ընտրություններն ու նախագահին: Երբ նորընտիր նախագահը մասնակցում է պաշտոնական արարողությանը, հակառակ ավանդույթին, նրան պատիվ չեք տալիս: Լինելով պետական կառույց, պետության ղեկավարի դեմ դիրքեր գրավելու մեջ որեւէ անհարմարություն չեք տեսնում: Պետական ավանդույթներին համապատասխան գործելը մի կողմ, դուք ոտնահարում եք «Չանքայայի» նստավայրին առնչվող արարողակարգը, անտեսում ընտրողի կամքը եւ չեք հարգում ժողովրդավարության սկզբունքները:

Լավ, ո՞վ եք դուք: Մի՞թե պատասխանատվություն չունեք: Սակայն, երբ ձեզ ձեռնտու է, չեք խորհում ճգնաժամ առաջացնելուց, ձեր հայտարարություններով խանգարում եք պետական կառույցների ներդաշնակ գործունեությունը երկրում: Ունե՞ք դրա իրավունքը: Իհարկե ոչ: Դրա լիազորությունն էլ չունեք: Նույնիսկ Լատինական Ամերիկայում արդեն պատմության գիրկն են անցել զինվորական վարչակարգերը եւ ոչ ոք այլեւս չի հիշատակում «զինվորական ժողովրդավարության» մասին: Նախ դուք պետք է սովորեք ժողովրդավարության անհրաժեշտ կանոնները, ապա եւ հասկանաք հասարակության հետ կռվելու եւ հասարակական պահանջներին մարտահրավեր նետելու կործանարար էությունը երկրի համար: Ձեր բնորոշած հասարակարգը որեւէ առնչություն չունի ժողովրդավարության հետ: Եվ վերջապես հասկացեք, որ Թուրքիայի պես երկրները կառավարելու եւ նրա ամբողջականությունը պահպանելու միակ ուղին ժողովրդավարությունն է: Ժամանակն է, որ ձերբազատվեք ձեր նախապաշարմունքներից»:

Երթուղային ավտոբուսներում պետք է լինեն բարձրախոս եւ մուտք

Համաձայն կառավարության ընդունած կարգի

Հայաստանից դուրս ավտոմոբիլային տրանսպորտով բեռնափոխադրումների իրականացման եւ Հայաստանի տարածքում ավտոմոբիլային տրանսպորտով ուղեւորափոխադրումների կազմակերպման կառավարության երեկ ընդունած կարգերը լրագրողներին ներկայացրեց տրանսպորտի եւ կապի նախարար Անդրանիկ Մանուկյանը:

Հայաստանից դուրս բեռնափոխադրումների իրականացման կարգն, ըստ նախարարի, ընդունվել է նպատակ ունենալով հեշտացնել մեր փոխադրումների գործը: Համաձայն այդ կարգի, երկկողմ պայմանագրերի հիման վրա տրվում են թույլտվություններ, որոնք իրավունք են տալիս երկու պետությունների փոխադրողներին աշխատել եռթեւեկել միմյանց տարածքով: Անդրանիկ Մանուկյանն ասաց, որ միայն երեք պետություններ կան, որոնց տարածքներում հայ փոխադրողները կարող են առանց թույլտվության, ըստ կնքված միջպետական պայմանագրերի, եռթեւեկել: Այդ երկրներն են Վրաստանը, Ռուսաստանը եւ Ղազախստանը: Նախարարն ավելացրեց, որ Հայաստանի օրենսդրությունը փոխադրումների ոլորտում լիբերալ է, ինչը գալիս է մեր շրջափակված լինելուց: Այլ երկրների փոխադրողները, վճարելով պետական տուրքերն ու հարկերը, կարող են անցնել մեր երկրի տարածքով, մինչդեռ կան երկրներ, որ հատուկ թույլտվություն են պահանջում դրա համար: Որպես օրինակ նա նշեց, որ հայկական մեքենաները չեն կարող եռթեւեկել Թուրքիայով, մինչդեռ թուրքական մեքենաները եռթեւեկում են Հայաստանով:

Ինչ վերաբերում է Հայաստանի տարածքում ուղեւորափոխադրումներին, ապա այդ մասին ընդունված կարգով սահմանվել են ուղեւորափոխադրումներ իրականացնելու համար ավտոբուսների եւ միկրոավտոբուսների առջեւ դրվող չափանիշները, մասնավորապես նրանց կահավորանքը, տեխնիկական պայմանները, չվացուցակները, աշխատանքի ռեժիմը:

Անդրանիկ Մանուկյանը հայտնեց, որ համաձայն այդ կարգի, ավտոբուսներում պետք է նշվեն իրենց համարները, վարորդի անուն-ազգանունը, կազմակերպության անվանումը, որին պատկանում է ավտոբուսը: Ավտոբուսները պետք է լինեն մաքուր, կահավորված բարձրախոսով, դրանցում պետք է լինի մուտք՝ վթարի դեպքում ապակին կոտրելու եւ դուրս գալու համար: Նույն պահանջները, բացի բարձրախոսի առկայությունից, դրված է նաեւ միկրոավտոբուսների առջեւ:

Չվացուցակների սահմանման մասին, ի պատասխան «Ազգի» հարցի, տրանսպորտի եւ կապի նախարարն ասաց, որ, համաձայն կարգի, դրանք սահմանում են Երեւանի ավտոբուսային եւ միկրոավտոբուսային երթուղիների համար Երեւանի քաղաքապետարանը, մարզերում՝ մարզպետարանները: Անդրանիկ Մանուկյանը նաեւ հայտնեց, որ հիշյալ կարգերը ուժի մեջ են մտնում դրանք հրապարակելուց 10 օր հետո:

ԱՐԱ ՏԱՐՏԻԲՈՍՅԱՆ

Օգոստոսի 31-ը Զորավար Անդրանիկի հավերժական կյանքի 80-ամյակի օրն է

Զորավար Անդրանիկի ուսանելի կյանքը հիմնականում պատկառելի սերնդի ոգեկոչմանն ու խոնարհումին է արժանանում, գրեթե անմասն մնալով ամող սերնդի դաստիարակության կարեւոր գործից: Սակայն Անդրանիկ Զորավարի գործի շարունակության ու անվան նվիրյալ, մեր խմբագրության լավ բարեկամ, «Զորավար Անդրանիկ» միության հիմնադիր նախագահ Նորայր Մուշեղյանը լրացնում է առկա բացը: Պարոն Մուշեղյանը պարբերաբար խմբագրություն է բերում հրապարակման վերածած իր թանկարժեք տեղեկությունները, ասես նյութականությունից թմրած մեր հասարակությանը հիշեցնելու, որ հայը լավ պիտի սերտի հերոսի կյանքի պատմության մանրամասները եւ նրա օրինակով ապրելով արժանի համարվի Անդրանիկի հետնորդ կոչվելուն:

Քո անունը պիտի հիշվի դարեդար...

(Սասուն Շեռամի հայտնի երգից, գրված 1901 թ.)

Վերջին քսան տարիներին հայրենիքում եւ սփյուռքում հրատարակվեցին մի շարք մենագրություններ, դոկտորներ Անդրանիկ Զելեբյանի, Համբարձում Կարապետյանի, ակադեմիկոսներ Գեւորգ Ղարիբջանյանի, Հրաչիկ Սիմոնյանի, անդրանիկագետ Ռուբեն Սիմոնյանի ուսումնասիրությունները:

Տպավորիչ, մեր օրերում հատկապես նոր սերնդին քիչ է հետաքրքրում ազգային հերոս, ազգային արժեք, ազգային արժանապատվություն հասկացությունները: Միջին եւ ավագ սերնդի մեծ մասն էլ օրվա հացի խնդրով է մտահոգված:

Մեր օրերում դրամն է թելադրողը, մի տեղ ցոփ կյանքի զեխություն, ժողովրդի մեծ մասի մեջ՝ աղքատություն, թշվառություն: Ինչ կասեր Անդրանիկը. Բայց... գանք Զորավարին, հայտնի է, որ Զորավարը միշտ էլ ապրել է կարիքի մեջ, մի՞թե հերոսն առանց ֆինանսական նեղության չէր կարող ապրել:

Իհարկե կարող էր, հավաստիացումնե՞ր, խնդրեմ.

1919 թ. ձմռան վերջերին Զորավարը իր մոտ եղած գումարի շուրջ մեկը թողեց Սյունիքի ղեկավարությանը՝ գաղթականների հոգսերը հոգալու համար: Այդ նույն թվականի գարնանը, երբ Զորավարը հարկադրաբար հեռանում էր հայրենիքից, իր մոտ եղած ողջ գումարը՝ 60 հազար ռուսական ոսկին հանձնում է Գեւորգ Ե կաթողիկոսին՝ պատգամելով 45 հազարով հոգալ գաղթականների կարիքները, 15 հազարով էլ մի հուշարձան կանգնեցնել Երեւանի հրապարակներից մեկում 30 տարի իր հետ ազատության համար պայքարած, զոհված, անշիրիմ մնացած զինվորների հիշատակին:

Կարող էր, չէ՞, այդ գումարները պահել իրեն, ո՞վ էր հաշվել...

Հայտնի է, որ Զորավարի հայրենիքից հեռանալու մեջ իրենց սեւ գործը կատարեցին ոչ միայն անգլիական եւ վրաց կառավարությունները (վերջիններս աչք ունեին Լոռվա մարզի, հատկապես Ալավերդու պղնձի հանքավայրերի վրա), այլեւ այն ժամանակվա հանրապետության որոշ ապիկար եւ կաշառված ղեկավարները:

Ուրախ էին Վրաստանի ղեկավարները, որ ի վերջո չեզոքանում է Անդրանիկի ուժը հայոց երկրում, եւ ժամանակի հարց է Լոռին գրավելը, եւ նրանք այնպիսի ճոխ սեղան էին բացել Թիֆլիսում Զորավարին ընդունելու եւ փառքով ճանապարհելու համար...

Հայտնի է նաեւ, որ հերոսը հացի սեղանին չմոտեցավ այնքան ժամանակ, մինչեւ վրաց կառավարությունը արտաքին գործոց նախարար Գեգեչկորիին հանձնարարեց վերացնել Բաթում-Երեւան երկաթգծի բլոկադան եւ մինչեւ ցորենով, ալյուրով, դեղորայքով, հագուստով բեռնված վագոնների շարասյունը մտնի Հայաստանի տարածք: Այդ ժամանակ Թիֆլիսում գիտեին, որ Զորավարը միայն երեք պարկ գարի է վերցրել իր Ասլան ձիուն կերակրելու համար... Եվ այդ ժամանակ նրան են հանձնում խոշոր մի գումար ճանապարհորդական ծախսերը հոգալու համար: Զորավարը այդ գումարն էլ շոգեքարշի ղեկավարի միջոցով ուղարկում է կաթողիկոսին. կարո՞ղ էր այդ գումարը պահել իր մոտ, իհարկե... կարող էր:

1922 թ. Փարիզում ամոնության առիթով նորապսակներին ընծայվեց շուրջ կես փութ զարդեղեն (Զորավարի այրի, 70-ամյա տիկին Նվարդի 1966 թ. Վառնայում ինձ պատմածից), որոնք վերածելով գումարի, Զորավարը սննդամթերք, դեղամիջոց, հագուստեղեն է ուղարկում Հայաստան:

Հայտնի է նաեւ, որ նույն՝ 1922 թ. նորապսակներին հրավիրում են Անգլիա, որտեղ, հատկապես Մանչեսթրում, ընծայվում են մեծ խանակությամբ զարդեր, որոնք Անդրանիկը նույնպես օգտագործում է հայրենիքին օգնելու նպատակով:

Մինչեւ այժմ էլ բացահայտված չէ, թե ինչ դրդապատճառով Զորավարը Փարիզից մեկնեց եւ բնակություն հաստատեց Ամերիկայի Ֆրեզնո քաղաքում, չէ՞ որ Փարիզում էր բնակվում մեծ բարեբար, նրա հարազատի կնքահայր Պողոս Նուբար փաշան...

Ի դեմ, Ֆրեզնոյում է Զորավարին առաջին անգամ տեսնում եւ այդ տպավորության տակ մի զգայացունց պատմվածք գրում Վիլյամ Սարոյանը:

Գիտենք նաեւ, թե որքան մեծ էր Հովհաննես Թումանյանի եւ Անդրանիկի բարեկամությունը: Երբ Զորավարը տեղեկանում է, որ Օհանեսին գնար է պետք Մոսկվայում վիրահատություն կատարելու համար, բանկից տոկոսով վերցնում է մեծ գումար եւ ուղարկում է Թումանյանի որդի Համլիկին...

Գրեթե բոլոր հեղինակների մոտ միակերպ նշված է, որ երբ 1926-ին խորհրդային Հայաստանից պաշտոնական պատվիրակություն էր գնացել ԱՄՆ հանգանակություն կատարելու, տեղում հանդիպում է հայկական համայնքի շաս սառը վերաբերմունքին եւ կանգնում առաքելության ձախողման տխուր փաստի առջեւ:

Ահա այդ ժամանակ է, որ հայրենասեր հերոսը հանդես է գալիս իր ողջ վեհությամբ եւ հայրենիքին օգնելու աննահանջ վճռականությամբ, խնդրելով պահանջում է, պահանջելով խնդրում եւ այսօրվա չափանիշով շուրջ մեկ միլիարդ դոլար հանգանակելով հանձնում է պատվիրակության ղեկավար Գրիգոր Վարդանյանին: Զորավարը Հայաստան բերելու համար նույն պատվիրակությանն է հանձնում ժամանակին եգիպտահայերից ստացած պայմանը, մեծարժեք ադամանդներով զարդարված ոսկեզօծ թանկարժեք սուրը:

Հասանք, մտանք բակ, միջանցք, Նինան բացեց սենյակի դուռը, գլխով արեց: Անցա ներս, նա փակեց դուռը եւ մնաց միջանցքում:

Ինան կծկված, շորերով պառկել էր թախտի վրա, կիսով չափ ծածկված, դեմքը՝ պատին:

- Նին, եկա՞ր,- հարցրեց խզված ձայնով, առանց շրջվելու:

- Ես եմ,- ասացի:

Գլուխը թեքեց, դանդաղորեն շուռ եկավ, չէր երեւում, թե մեռնում է ինձ համար, տնքալով նստեց, ինչպես մեջքը բռնված հիվանդ կին, իջա եւ գլուխս սեղմեցի ծնկներին:

- Ինչո՞ւ ենք փախչում իրարից,- գլուխս բռնելով ասաց նա:

Ձայնը թաց էր, հաստատ աչքերը լցվել էին, եւ քիթն էր ֆսֆսացնում: Այդ հարցը մեզնից մեկն էլի տվել էր, ես որ մի հազար անգամ ինքս ինձ ասել էի:

Չպետք է համբուրեի: Սահմռկած ինձ էր նայում:

- Օծանելի՞ք,- շշնջաց նա:

- Ինչ օծանելիք,- հարցրեցի ակամա:

Նինան բացեց դուռը եւ գլուխը մտցրեց: Ստուգում էր, թե ինչ ենք անում:

- Օծանելի՞ք,- կրկնեց Ինան նրան նայելով:

- Ինչ օծանելիք,- զարմացավ քույրը:

- Նրանից օծանելիքի հոտ է գալիս:

- Երեւի ինձնից է,- ասաց Նինան,- ես մի քթեւ փաթաթվեցի նրան,- եւ դուռը փակեց:

- Կներես, պետք է ծխեմ,- վեր կացա:

- Այստեղ ծխիր,- աչքերը կասկածով լեցուն էին: Մտածածը եթե չասեր, դեմքին կարտահայտվեր անմիջապես:- Որտե՞ղ էիր գիշերը:

Նստեցի աթոռին, սիգարետս վառեցի: Ինչ էի անելու, եթե ծխող չլինեի:

- Իսկ դո՞ւ որտեղ էիր,- հարցրեցի:

- Ես ամբողջ գիշերը զանգահարում էի:

- Զանգահարում էիր... Ինչո՞ւ գնացիր:

- Լավ,- սթափվեց նա,- անիմաստ խոսակցություն է: Ինձ էլ տուր սիգարետ:

Հապաղեցի:

Նինան նորից բացեց դուռը, որոշել էր ոտքն մեկ հետեւել իրադրությանը: Կարծում էի, թե կհանդիմանի ծխելու համար, բայց մոխրաման բերեց:

- Տուր սիգարետ,- նրա գնալուց հետո կրկնեց Ինան:

- Ստուգո՞ւմ ես:

- Ոչ, իրոք ուզում եմ:

- Ես էլ եմ շատ բան ուզում:

- Օրինակ:

- Պարզություն, հասկանալ, թե ինչ է կատարվում:

- Գրել էիր, թե հասկացել ես:

Խոհյանի կյանքից

«ԽԱՉԱԳՈՂ»

- Հասկացել եմ, բայց այդ հասկացածը ոչ մի կերպ չեմ հասկանում:

Իրոք անհմաստ խոսակցություն էր դառնում: Սպասում էի, որ նորից գիշերվա մասին կհարցնի:

- Գրամեֆենադ ինչո՞ւ էիր թողել:

Ուզում թե՝ ուրեն այն հարցը տալու էր, ոչ միայն ինքը, քոյրն էլ էր բացատրություն պահանջելու:

- Նվիրել եմ քեզ:

- Առաջադեռն տղա ես, շռայլ, սիրտիտդ ողողում ես նվերներով... Ինձ պետք չէ քո գրամեֆենան...

- Պետք չէ, թափիր...

- Ուրեմն քեզ համար ոչ մի արժեք նշանակություն չունի՞... Նույն ձեփ էլ ինձ կթափես...

Նրա ձայնի վրա Ինանն հայտնվեց.

- Ի՞նչ է պատահել, չեք կարո՞ղ հանգիստ խոսել:

- Ինձ ինչո՞ւ բերեցիր այստեղ, քույրդ կռիվ է անում:

Ինանն ավելի բորբոքվեց,- ես գիտեմ, թե ինչ է գրամեֆենան նրա համար, իսկ նա թողնում է ինձ, ինչ է՝ մի անգամ ասել եմ, թե առանց գրամեֆենայի չէր գնա...

- Ի՞նչ կա դրա մեջ,- ասացի,- տեղ չունեմ դնելու: Բացի դրանից, ափսոս են ռուսերեն տառերը, Երեւանում ես հայկականը կճարեմ...

- Ինչո՞ւ գնեցիր... որ Գալինա Իվանովնային նվիրես...

- Նա ճանաչո՞ւմ է Գալինա Իվանովնային,- զարմացավ Ինանն:

- Ճանաչո՞ւմ է... Տեսնեիր, թե ինչ հիացմունքով էր խոսում նրա մասին... Գրամեֆենան հենց նրա համար էր գնել:

Ինչ խոսք, գրամեֆենան Գալինա Իվանովնայի համար չէի գնել, բայց ի՞նչ տարբերություն, նա ճիշտ էր: Կնոջ զգացողությունը հոտն առել էր, ոչ միայն օծանելիքի...

- Ինչպե՞ս թե նրա համար...

- Այո՞... Հենց սիրուն դեմք տեսավ, խելքն իրենը չէ...

- Ավտոկայանում էլ տոմսը ձրի տվեց մի աղջկա,- Ինանն ակամա յոտ լցրեց կրակին:

- Ո՞վ էր, գեղեցի՞կ էր,- իսկույն հետաքրքրվեց Ինանն:

- Վալյա Սավելեւան էր:

- Մի, նա տգեղ է:

Իմ կարծիքով՝ տգեղ չէր:

- Բայց ինչո՞ւ,- հիմա էլ Ինանն սկսեց,- ես ի՞նչ կմտածեմ, եթե մեկը հենց այնպես ինձ տոմս տա եւ փողը չվերցնի... Չէ՞ որ դա վիրավորական է:

- Դու տոմսն ես ասում, իսկ նա գրամեֆենան էր տալիս անծանոթ կնոջը... մի կիսաս ժամի համար, պատկերացնո՞ւմ ես, եթե նա...

- Ջեզ ի՞նչ է եղել,- էլ չդիմացա,- դուք իմ ճանաչած քույրերը չեք... Ինչո՞ւ եք ինձ մեղադրում: Ես ութ հազար ռուբլի եմ վաստակել ձեր գյուղացիների համար տներ կառուցելով, ի՞նչ է գրամեֆենայի գինը այդ գումարի մեջ կամ ավտոբուսի տոմսը, ծիծաղելի է, երկու ռուբլի հիսուն կոպեկ...

- Հարցը գումարը չէ,- ասաց Ինան,- հարցն ինչուն է...

- Քեզ ա՞յդ ինչուն է հետաքրքրում,- ընդհատեցի նրան,- ինձ միանգամայն ուրիշ ինչու է հետաքրքրում:

- Ո՞րը,- սառեց Ինան:

- Ինչո՞ւ դու, ինձ սիրելով հանդերձ, փախչում էիր ինձնից, քանի՞ անգամ է եղել... Մեկ պատճառում էիր ինձ, մեկ վանում, ինչո՞ւ, ասա... Նույնիսկ մտածել եմ, որ Ինանն էր ազդում...

Ինանն անհանգիստ շարժվեց նախատալի հայացքն ինձ ուղղելով:

- Նաստասյա Ֆիլիպովնայի հիվանդությունն էր քեզ բռնել, մտածում էիր, թե արժանի կամ հարմար չե՞ս ինձ... Ինանն է ավելի հարմար...

- Այս ի՞նչ է կատարվում,- Ինանն գլուխը բռնեց,- ինձ ինչո՞ւ եք խառնում ձեր պատմության մեջ...

- Կամ մտածում էիր, որ մոլագար անասո՞ւն եմ, սեռական հիվանդ, որ միայն իր հաճույքի գերին է...

- Ո՛չ մեկը, ո՛չ մյուսը... Դրանք եղել են, բայց սկզբում,- ասաց Ինան ձեռքը ճակատին սեղմելով,- ես կասեմ... հիմա չեմ կարող, գլուխս պայթում է...

- Այստեղ մի ծխիր,- ի վերջո դիտողություն արեց Նիան,- գնա վառարանի մոտ:

- Բայց ժամանակ չկա,- հուսահատվում էի,- Ինա, ես գնալու եմ, գուցե այլեւս չհանդիպենք:

- Եթե չենք հանդիպելու, ինչո՞ւ պիտի քեզ բացատրություն տամ: Եթե անհետանալու ես իմ կյանքից, ինչո՞ւ ես բացատրություն պահանջում:

Դուրս եկա սենյակից: Ինանն վառել էր վառարանը, գվվում էին կեչու փայտերը: Նստեցի ցածրիկ աթոռին, բաց դռնակի մոտ: Գրեթե իրար հետեւից էի ծխում, ահավոր է, իսկ գրելիս ինչքան կծխեմ... Կրե-Մարյանն ասում էր, որ նկարիչների ստեղծագործական կյանքը երկար է, որովհետեւ բնության մեջ են աշխատում, իսկ գրողները սենյակում փակված, սեղանին հակված ծխում են, հա ծխում...

Ինանն թրջոց էր սարքում, տարավ եւ վերադարձավ:

- Մի՞թե չես կարող չծխել,- հանդիմանեց,- գիշերը չի քնել, խեղդվում էր...

Թոքաբորբը մոռացել էի, միայն թե չկրկնվի: Իսկույն սիգարետը գցեցի վառարանի մեջ, բացեցի դուռի եւ սենյակի դռները:

- Ծածկիր նրան, օդափոխենք տունը,- ասացի Նինային:

Լուսամուտները նույնպես բացեցի, մի քանի ոտքից օդը մարվեց:

Ինան աչքերը փակ պառկած էր: Վերադարձանք խոհանոց: Այստեղ Նինան ինձ բռնեց:

- Որտե՞ղ էիր գիշերը:

- Միասին էինք,- փորձեցի կասակել,- մոռացե՞լ ես, որ օծանելիքի հոտն է:

- Ես նրան խղճացի... Մի շաբաթիր, Ինան գիտի, որ ես օծանելիք չեմ օգտագործում,- Նինան մոտեցավ, հոտոտեց օձիքս, կուրծքս,- ես ոչինչ չեմ զգում...

- Չէիր կարող զգալ,- սիրտս առա:

- Ինչո՞ւ, չի՞ եղել:

- Իհարկե չի եղել:

- Իսկ որտե՞ղ էիր գիշերը:

- Ես կասեմ, երբ քույրդ կխոսի: Եթե այլեւս չենք հանդիպելու, ինչո՞ւ բացատրություն տամ:

- Ի՞նչ պատահեց ձեզ,- տխրեց Նինան,- չէի հավատում, որ հնարավոր է այդպիսի սեր: Նույնիսկ նախանձել եմ... Ոչ թե Ինային,- փութաց ճշտել,- երկուսիդ էլ, որ այդպես սիրում եք, սիրահարված եք...

- Իսկ դու կարո՞ղ ես բացատրել նրա արածը, այդ փոփոխությունները, հակասությունները...

- Ոչ, բայց համոզված եմ, որ սիրում է քեզ:

- Այո,- Ինան դուռը բացեց,- սիրել եմ եւ սիրում եմ... ինչպես որ ինքն է ինձ սիրում, գիտեմ...

- Ես գնամ,- շարժվեց Նինան:

- Ոչ,- արգելեց քույրը,- մնա, որ... չնախանձես...

Նինան մնաց: Նա հոգատար էր քրոջ հանդեմ, բայց միայն ուրացավությունը չէր, հետաքրքրասիրությունն էլ էր պահում նրան: Բետոնի օրը մեզնից պոկ չէր գալիս:

- Բայց ես չեմ կարող խոսել,- Ինան առաջացավ,- մինչեւ չիմանամ, թե որտեղ ես գիշերել: Եթե ուրիշի հետ ես եղել, իմ խոսքովանությունը ծիծաղելի կթվա...

Ինչքա՞ն կարող եմ խուսափել՝ մինչեւ ութը... կամ մի քիչ անց: Խուսափելուց բացի... թաքցնելը դեռ փրկություն չէր, անհրաժեշտ էր կասկածի տեղ չթողնել, բայց ինչպե՞ս...

Ինան գրկեց քրոջը, համբուրեց:

- Քեզնից օծանելիքի հոտ չի գալիս, քույրիկս, ես գիտեի: Եթե համբուրած էլ լինեիր նրան, մի թեթեւ փաթաթվելուց այդպիսի թույլ բուրմունքը չէր անցնի... Ես քեզ շա՜տ լավ եմ ճանաչում, դու քո հերթական փրկարար քայլն արեցիր:

Մոտենում էր ինձ, գիտեի, թե ինչ է անելու: Հոտոտեց վիզս, պիջակս հետ տարավ, դեմքը սեղմեց կրծքիս, երկար պահեց խոր շունչ քաշելով:

- Անընդհատ ծխում էիր, որ կորցնե՞ս հոտը,- գլխի ընկավ նա,- բայց էլի զգում եմ... Ոչ միայն դա, ահավոր է, քո հոտն է փոխվել, սա քո հոտը չէ,- լացակումած ընջաց:

Նինան աղբած նայում էր:

- Ես հո՞տ ունեմ,- զարմացած էի ձեւանում, խուսափելու հնարավորություն էր,- ինձնից հո՞տ էր գալիս...

- Ես քեզնից հոտ էի առնում, դա քո ինքնությունն էր, սեփական հոտը, որն արդեն կորել է, խառնվել է,- ինձ բաց չէր թողնում,- մեկ-մեկ կհոտոտեմ գյուղի բոլոր կանանց, կգտնեմ,- սպառնաց,- այսպիսի օծանելիք ամեն մեկը չի օգտագործի...

Մոտենում էր, եթե շարունակեր, շուտով անունը կտար:

Իսկապես, եթե անե՞ր... Գալինա Իվանովնային փողոցում բռներ ու հոտոտեր...

- Բավական է,- ուսերը բռնեցի,- պատճառը քո մեջ փնտրիր, ինչո՞ւ ես հոտոտում, ներսդ հոտոտիր...

- Ինչ ամոթ է,- Նինան ձեռքերով դեմքը փակեց եւ մտավ սենյակ:

- Տասներեք օր բացակայեցի, գյուղում չէի,- շարունակեցի ձայնս ցածրացնելով,- չհարցրեցիր, թե որտեղ եմ եղել, ինչ եմ արել: Հենց այս գիշե՞ր քեզ հունից հանեց... Իսկ որտե՞ղ մնայի, երբ դու ինձ վռնդեցիր փասորեն...

- Որտե՞ղ էիր գիշերը,- մատները խրեց ուսերիս մեջ, մինչեւ չպարզեր, չէր հանգստանա,- գնայիր ձեր երկիրը, ինչ ուզում էիր անեիր հայտիների հետ, ինչո՞ւ այստեղ... Չէ՞ որ ամբողջ գյուղը գիտեր մեր մասին...

Ջեռքերը մարմնին սեղմելով գրկեցի, համբուրեցի դեմքը քանի անգամ, ոչ մի համ, համբույրի ոչ մի զգացողություն կամ տրավորություն, չարացած, կատաղած կին էր: Գրկած պահեցի ցնցումները զսպելով, թրտում էր, փորձում ազատվել, թուլացավ, գլուխը գցեց ուսիս, լաց եղավ:

Նինան նայեց դռան առանիից, հետ քաշվեց:

Եթե Նինան չլիներ, կտանեի ներս, գուցե մոռանար... Այստեղ մնում էր կանգնած գրկել, համբուրել, շոյել, բայց անկողինը կհանգստացներ: Թեեւ Նինայի ներկայությունը նաեւ փրկություն էր, գիշերն ուրիշ կնոջ հետ անցկացնելուց հետո սիրած աղջկան մերձենալն անքննելի եւ անհնար թվաց:

Խոսքի հորձանք էի զգում: Կարծես կարող էի, նույնիսկ ճշմարտությունն ասելով, նորից հասնել սիրո: Ժամանակ չկար, որը մեզ երբեք չէր հերիքում: Ամբողջ գիշեր միասին պառկած չէինք հասցնում իրար ամեն ինչ ասել, մի չնչին մաս ընդամենը:

Իրոք փոխվել էի: Հաստատ էր, որ սիրում էի նրան, բայց մինչ այդ սերս նաեւ վայելք էր եւ կիրք, իսկ հիմա՝ ցավ եւ կարեկցանք: Նիհար, խեղճացած ուսերը գրկելով ցավ էի զգում, որ նրան վիշտ եմ պատճառում:

- Դու ես փոխվել,- ընջացի ականջին,- դիմագծերդ չեմ ճանաչում, աղճատվել են, կնճռես, նիհարել, խեղճացել ես, ինչո՞ւ... Ինչո՞ւ ես քեզ տանջում, ինձ էլ հետդ: Պատճառն այս գիշերը չէ, երեկ նույնպես հոգիդ հանգիստ չէր, այլապես չէիր գնա, կմնայիր: Նինան չհայտնվեր, մեկ ուրիշ պատվակով կփախչեիր... Ինչո՞ւ խուսափեցիր պատասխանից, մի՞թե հանդիպել եք... Եթե ուրիշը կա, ես կարող եմ պայքարել եւ հաղթել, բայց քո դեմ ես անզոր եմ, եթե դու ես ինձ մերժում, ես թույլ եմ... Բայց երջանիկ ենք եղել, անմոռաց օրեր ունեցել... Քեզ տեսնելուց հետո միայն քեզնով եմ ապրել: Ինչ ազատ ու թեթեւ աղջիկ էիր, մի՞թե իմ սերը քեզ տառապանք բերեց: Այսքան առաջ է՝ ինչպես էիր հեծանիվով գալիս փողոցով: Պայծառ արեւի տակ մազերդ ուսերդ փայլում էին: Ջայն տվեցիր Նինային եւ քեզանից անցար... Իսկ Նինան ինձ դուռ էր գալիս, դեռատի աղջիկ, չարաճճի եւ հմայիչ: Ճաշարանում ինձ ձեռ էր առնում ընկերուհու հետ: Հետո տեսա, որ լրջախոհ շախմատիստ է եւ հոգատար քույր: Մորդ հետ եկավ ցեմենտ տանելու: Սիրահարվում էի նրան, սկսում էի սիրահարվել: Եթե մի երկու հանդիպում էլ լիներ, առիթ, ժամ, կբոցավառվեի: Բայց սերն ինձ պետք չէր, եւ ես սիրո համար չէի: Ինձ պետք էր մեկը, որ հետաքրքրվեր ու ոչինչ չպահանջեր: Քսաներեք տարեկանում կույս մնալն ամոթ էր պարզապես, թեկուզ կույսի նշանի տակ ծնված լինես... էլ չեմ խոսում ծվատող գիշերային տենչի մասին: Լավ խայծ էի, մնում էր սպասել մինչեւ մեկը կտցեր: Ստիպված էի սպասել, որովհետեւ անփորձ էի եւ ամաչկոտ:

Եկավ հուլիսը, հայտնվեց պեպենոտ աղջիկը եւ կով տվեց խայծը: Երկուսս էլ իրար պետք էինք, երկուսս էլ ուզում էինք օգտվել ուրիշից: Հետո արդեն պարզ չէր՝ ով էր խայծը, ով էր զոհը... կամ կա՞ր զոհ...

Հրաշալի էր հուլիս ամիսը: Մինչ այդ օգոստոսն էի սիրում, եւ աշունը, հուլիսն ավելացավ եւ գերիշխեց: Արեւ, գեղ եւ սեր, կիրք եւ մարմնի պաշտամունք, լիակատար վայելք լիակատար ներդաշնակությամբ եւ երկուսի ներքին համաձայնությամբ: Ամեն ինչ հրաշալի էր, քանի դեռ չէր ծնվել... սերը: Երկուսս էլ գոհ էին, ինքնագո՞հ... Շաղակրատում էին միասին, տրվում եւ զգվում իրար, ձեւացնելով, թե սերը հենց դա է կամ իրոք չգիտեին, որ դեռ սեր չէ... Չէ՞ որ երկուսն էլ մինչ այդ չէին սիրել...

«Եվ բռնեց սերը նրանց, չարախնդալով հրատարակեց», երգում էր ամեն ինչ տեսած մարդը: Սիրախաղը վերածվեց սիրո, իսկական, տանջալի սիրո: Ճահիճն էին խրվել եւ օրեցօր շարունակում էին ընկղմվել... Չէին ուզում ճահիճ, ուզում էին վայելք եւ ճախրանք: Դեռ չէին ուզում հավատալ, որ զրկվել են ազատությունից, որ պետք է ապրեն միայն իրար համար, իսկ դա պահանջում էր նվիրում, անձնազոհություն եւ կատարյալ մարդություն: Եթե սիրում ես, նվիրվելը հետաքրքիր է, նույնիսկ հաճելի, հոգատար ես, կարեկից, ընդառաջող, զիջող: Ուժգին, իսկական սերը հասցնում է անձնազոհության, դա նույնպես բխում է հոգուց, առանց պարտադրանքի: Ամենադժվարը, եթե ոչ անկարելին, վերջինն է՝ մարդությունը, սուրբ սիրո առհավատյան, միակ սիրո...

Անձնազոհությունը պիտի անհավատալի թվար, բայց համոզվել եմ, որ հնարավոր է, շատ եմ զգացել քո մասին մտածելիս: Քո մասին մտածում էի միշտ, անընդհատ: Երբ հետս չէիր եւ երբ միասին էինք: Երբ սիրում էիր ինձ եւ երբ ատում էիր, թերեւս չէիր ատում, փախչում էիր կամ ինձ վանում... Այնքան ուժեղ էր սերը եւ անսպասելի... Դու սիրուց էիր փախչում...

Դու գիտե՞ս, թե ինչու Բելովը քեզ հիվանդանոց բերեց: Նրան վկա էր պետք, որ վրացու ցուցմունքը հաստատի, եթե վրացին հայտներ, որ ես եմ իրեն խփել, եւ մահանար: Դու եւ Բելիկովը վկայություն կտայիք: Դու անմիջապես կհաստատեիր: Վերջ ի վերջո դու ինձ չէիր զրպարտում, դու պարզապես հաստատում էիր, որ վրացին այսպիսի բան է հայտարարել, կկատարեիր քո քաղաքացիական պարտքը եւ կպատանեիր ինձ: Դու մինչեւ հիմա էլ համոզված չես, որ վրացուն ես չեմ խփել, ինչպես եւ Բելովը: Որովհետեւ դու ինձ չես ճանաչում: Դու իմ կեսն ես տեսել միայն՝ շաղակրատելիս, սրամտելիս, անկողնում եւ հանում քեզ կռվի նետվելիս կատաղած... Այդ կատաղությունն իմ մյուս, անծանոթ ու մութ կեսի լոկ սկզբն էր քեզ համար եւ արդեն վախեցնում էր... աղոթեցնելուց հետո... Ինչպե՞ն կարելի է սպանել բռնաբարողին: Ինչպե՞ս պատճառեմ խեղճ Կիրյուխարին այս գազանից, մարդասպանից... Իմ մի կեսը հասկանալի եւ հարազատ էր քեզ համար, մյուս կեսը՝ անծանոթ եւ սարսափելի... ուրիշ մտածողություն եւ պատկերացում, խորթ, անսովոր, խորհրդավոր... Երեւի սկզբում ավելի լավ էիր ճանաչում ինձ... կամ ավելի սիրելի էի... օրինակ՝ կղզում: Պարզ տղա, անփորձ եւ ենթարկվող, ամենակարեւորը՝ միանգամայն հասկանալի եւ կանխատեսելի, մաքո՞ւր... եւ հնազանդ... Բայց դու ինքդ մեծացրիր այդ տղային, չափից ավելի... Այնպիսի զգացում առաջացրիր նրա մեջ, որ երկրային էլ չէր ենթարկվում... Վախենալու եւ մի պատճառ, որովհետեւ այդ զգացումը քո ներսում էլ էր բռնկվել: Անհավատալի էր... Մտածում էիր մի երկու ամիս զվարճանալ մանչուկի հետ, թեթեւ տխրությամբ ճամփել նրան եւ շարունակել կյանքը՝ սպասելով հաջորդ ամռանը... Կամ՝ ձմեռն էլ իր հրապույրներն ունի: Համենայն դեպս հորիզոնը երեւում էր...

- Ափսո՞ն կղզու տղան,- մտմնջաց Ինան:

Հազիվ լսեցի, դեմքը սեղմել էր ուսիս, ոչ թե փարվել էր իրեն հատուկ թեթեւությամբ, այլ ուղղակի ընկել էր ինձ վրա, զգում էի, որ հազիվ է դիմանում: Նրա ճկուն բարեկազմությունը չորչորուկ նիհարության էր վերածվել:

- Ես էլ եմ ափսոսում, քանի որ դա իմ անցյալն է, անկրկնելի եւ անդառնալի, կորուստ: Ի վերջո ամեն ապրած պահ կորուստ է եւ անցյալ, քանի դեռ չի սկսվել կուտակումը: Սերը ջնջում է անցյալը եւ տալիս է իր ժամանակը: Նա մաքրում է անցյալի մեղքերը, բայց իր ժամանակում մեղքեր չի հանդուրժում: Եթե սիրում ես, տրվիր ամբողջովին, եւ՛ մարմնով, եւ՛ հոգով... Ոչ մի մութ ծալք եւ գաղտնի ցանկություն, հատուցումն անխուսափելի է, ոչինչ գաղտնի չի մնում երկրպի միջեւ...

- Որտե՞ղ էիր գիշերը,- ուժասպառ հարցրեց Ինան:

Հենց նոր անընդհատ խոսում էի ականջի ու մազերի մեջ, առաջվա պես... Սակայն առաջվա շարունակությունը չկար, հետ էինք քաշվել իրարից, թեեւ ուսերը գրկած էի պահում:

Ուրիշ ոչինչ չէր ուզում լսել, այդ հարցն էր տանջում նրան, ինչպես որ ինձ տանջում էր Փայլակի ասածը...

- Իսկ դու որտե՞ղ էիր տոնավաճառի գիշերը,- պոռթկացի.- ինձ խաբելով տուն բերեցիր, որ վերադառնաս նրա մո՞տ... Կինոյո՞ւմ էիք հանգստանում...

- Ես մի անգամ եմ կինո գնացել,- հետ գնալով ընջաց գունատված,- եթե հիշում ես... Բայց դա ինչ կարեւոր է... Դու որտե՞ղ էիր գիշերը, ասա, դու չես կարող ինձ խաբել...

- Ասեմ թե պնդեցի, որ գեսափին էի, ծառին նստած շախմատ էի խաղում, որ քանի անգամ պտտվել եմ գյուղում, Կենտրոնական փողոցով, ձեր փողոցով, գեսափով, ամբողջ գիշեր մի վայրկյան աչք չեմ փակել... Թեկուզ հավատաս, կասկածը կա եւ կմնա, կասկածից ազատվե՞ս, ինքդ քեզ կմեղադրես...

- Ե՞ս եմ մեղավոր...

- Մեղավո՞ր ես փնտրում: Ասում էիր՝ եթե կարողացար պահել, կմնամ: Ես չկարողացա քեզ պահել... Կամ հակառակը՝ դու չկարողացար ինձ պահել, ինչ տարբերություն: Ուրախացել էիր, որ ինձ աշխատանք են առաջարկել, առանց աշխատանքի չէի՞ կարող մնալ...

Նինան դուռը բացեց:

- Կներեք, եթե գնալու ես, ժամանակ չմնաց: Եթե գնալու եմ...

- Պե՞տք է գնալ,- հարցրեցի:

- Գնա,- ասաց Ինան:

Ահա վերջը: Եթե պետք է գնալ, անիմաստ է խոսակցությունը, որ անվերջ է: Ոչ մի բացատրություն եւ պարզաբանում, դրանք ոչինչ չեն լուծի, որովհետեւ սոսկ բառեր են: Հինգ տարի հետո նրան այլեւս չեմ տեսնի, գուցե եւ ընդմիշտ:

Մոտեցա, կարծեց, թե համբուրելու եմ, ձեռքերը պահեց դեմս:

- Ուզում եմ դեմքիդ նայել... ընդամենը... Ինչքան որ ժամանակ ունեմ, Նինան կասի:

Ցարությունն անցել էր, տխուր, հոգնած կին էր, սառած, ուսերը կքած, գուցե սպասում էր հեռանալուս, որ պառկի, հանգստանա, եւ ասաց թույլ, անկիրթ ձայնով.

- Ինչո՞ւ փրկեցի քեզ...:

Ուրբաթ օրերին

Ձեռքերը բռնելով սեղմեցի դեմքիս, չոր, կոշտ, տաք ձեռքերը... Հոգեծանր կամ նեռոդություն... թողեց մի քանի վայրկյան:

- Նստիր ճանապարհից առաջ,- ասաց Նինան:

Նստեցի ցածրիկ աթոռին, վառարանի մոտ:

- Մեզանում ջուր են լցնում գնացողի հետեփից,- ասացի Նինային:

Դռան մոտ կանգնեցի, որ վերջին անգամ նայեմ Ինային: Գլուխը կախել էր, ձեռքերը՝ ագուցել: Դուրս եկա, Նինան հետեւեց ինձ: Եթե չգար, խնդրելու էի:

- Ցթողնես հիմարություն անի:

- Ինչ նկատի ունես,- խստացավ Նինան:

- Այդ հոտոտելը... Ցնվաստանա գյուղում:

- Վե՞րջ,- հարցրեց նա:

- Վերջ... Ուզում եմ համբուրել քեզ:

Նա գլուխը թեքեց, որ համբուրեմ այտը:

- Առագաստու,- ասաց,- տասնհինգ տոմս մնաց:

Այնուամենայնիվ մազերն էլ շոյեցի:

- Քեզ ինչպե՞ս գտնեմ, եթե պետք լինի, ոչ մի տվյալ չես թողել:

- Ես հասցե չունեմ, Նինա, կոտրակես ցպահանջ, Երեւան-1...

Ընկերս էր Աբովյան փողոցի փոստատանը ցպահանջ նամակներ ստանում:

- Ազգանո՞ւնդ...

Գրիչկից թերթիկ պոկեցի եւ իմ տվյալներ կոչվածն առագորեն գրելով տվեցի նրան:

Վերջ, գնացի, վերջին անգամ այս մայթի վրայով: Դռնակին չէի հասել, հետեւից ջրի շշոց լսեցի: Նինան դատարկ թասը ձեռքին ժպտալով ինձ էր նայում:

Մեր գյուղում ջուր ցփնում էին հայրենի տնից գնացողի հետեւից, որ նշանակում է՝ բարով գնաս, բարով վերադառնաս:

Փողոցում սրընթաց քայլեցի, դա ինձ համար նորություն չէր: Դիմովիչը դրսում կանգնած ծխում էր:

- Ողջույն, Դիմովիչ,- ձեռս թափահարեցի գոլ խփող ֆուտբոլիստի պես,- կներես, ուշանում եմ ավտոբուսից:

- Հեռանո՞ւմ ես,- բղավեց նա,- մյուս տարի գալո՞ւ ես:

Ինքն այդ հարցին կպատասխաներ իր հայհոյանքներից մեկով, ես միայն ձեռքերս տարածեցի:

49

Եթե ավտոբուսից ուշանայի, վերադառնալու էի, ո՞ւր, չգիտեմ: Նինան ժամանակը լավ էր հաշվել, փրկել էր ինձ երկմտանքից: Եվ ծխել հաստրեցի:

Գնաց ավտոբուսը Կենտրոնական փողոցով: Ակոմբի մոտ հավախաներ կային: Հազար տարվա ֆիլմ էր ցուցադրվում, բայց կնայեի նախնադարյան գեղեցկուհիներին ժամանակակից տեսքով, «Մեկ միլիոն տարի մեր թվականությունից առաջ»: Սեւ օտարականը հեռանում է շիկահերների երկրից, միայն թե առանց շիկահեր գեղեցկուհու: Ինձ այստեղ բարեկամաբար եւ նույնիսկ սիրով ընդունեցին, բայց վատեցին, երբ արդեն յուրային էի դարձել, գրեթե յուրային եւ փորձում էի հարմարվել իրենց:

Ավտոբուսը փոստատան փողոցով դուրս եկավ ճանապարհ: Սութ էր, պատուհանից ձյուն էի տեսնում եւ քամու ձայնը լսում: Ավտոբուսային ուղեւորության սովոր էի եւ սիրում էի՝ հոգնության հետ նաեւ հաճույք գտնելով: Գիրք կարդալու կամ անկողնում արթուն պառկելու պես բան էր ինձ համար Երեւան-Լենինական երեքժամյա ճանապարհն անցնելը, անշուշտ բնության եւ ներքին պատկերների վազանցով, խորասուզված, երբեմն շրջապատի շփումով... Մոտավորապես նույնչափ ճանապարհ էր:

Պայուսակից հանեցի Ինայի շարֆը եւ գցեցի վզիս, տաք էր, հաճելի հոտով: Ապա կապեցի Գալինա Իվանովնայի նվիրած ժամացույցը, ճամփորդ եմ, պետք կգա ճանապարհին: Դրանք իրար չէին խանգարում: Ես ուրիշ հիշատակներ ունեի՝ շախմատի պատվագիրը, գետափից մնացած սիգարետի տուփը, ակնաբույժի գրած տեղեկանքը, չինուհու արձանիկը, Ինայի մեքենագրածը, մի ալբոմը գրպանումս էր, մուսը՝ մեջը, մտքիս մեջ:

Վերջում էի նստել: Երեքտեղանի նստարանը հարթեցող թափառաշրջիկներ էին զբաղեցրել, բոմժեր: Խոսակցությունից որոշեցի, որ Դիվինոյում աշխատել են եւ ինչ-որ վաստակով հեռանում են: Մեկը շատ էր խոսում, նրան առաջնորդ անվանեցի, բարձրահասակ էր, նիհար, անկյունավոր ուսերով եւ կզակով, ձեռքը թափահարելով էր խոսում: *Երկրորդը բարակ ձայնով հիմար էշախոս էր: Մի անգամ միայն ոգեւորվեց եւ ասաց հպարտությամբ. «Ես մայր ունեմ, կին էլ ունեմ»: Երրորդն էր հեստրիր, հիսունն անց, կաղ (ձեռնափայտով էր), գնդիկ, խոսում էր* զվարճալի մոթմոթոցով եւ ոչ մի բառ ճիշտ չէր արտասանում:

Ընդհանուր փողը եւ ճամփի պատարը Անկյունավորի մոտ էին, նկատելի կախման մեջ էին նրանից, բայց Մոթմոթը երբեմն արտահայտվում էր: Անկյունավորը պատմում էր, թե ինչպես է չորս հոգու ծեծել, իսկ Մոթմոթը հեգնանքով շարժում էր ուտած փորը:

- Դե, փչիր, փչիր...

- Ե՞ս եմ փչում,- բղավեց Անկյունավորը,- ես քեզ համար թոռնիկիս արկղը դատարկեցի՞:

- Դե,- ստիպված էր հաստատել Մոթմոթը:

- Դատարկեցի ու փչո՞ւմ եմ...

Անկյունավորը երկար ճառ սկսեց, որ չեն գնահատում իսկական ընկերական ծառայությունը, ինքն ընկերոջ համար կյանքը կտա, իսկ նրան, ով չի հարգի իրեն, կուտի եւ չի գնա զուգարան, կկորցնի ոտքի տակ, հողմացրիվ կանի...

Նա ձգվում էր վերեւ ու արդեն համարյա կանգնել էր՝ ձեռքը ընկերոջ վրա տարածելով, իսկ Մոթմոթը, արմունկին հենված, ուշադիր լսում էր, ինչպես դատախոսը ուսանողին, սխալ բռնելու համար:

- Էյ դու,- շուտ եկավ մի պնդակազմ տղա,- մի աղմկիր, թե չէ պատուհանից դուրս կթռչես:

Անկյունավորը կծկվեց վիշտի պես, թվաց, թե իսկույն կնեսվի վիրավորողի վրա եւ կխժռի նրան, բայց նստեց ու ֆնքանքով ժպտաց:

- Ճիշտ ես ասում, տղաս, իհարկե ճիշտ ես ասում: Մենք ընկերաբար մի փչ տաքացանք:

- Ամեն ինչ հասկանալի է,- Մոթմոթը նույնպես շտապեց իր հնազանդությունը հավաստիացնել:

Սսկված ընկերները փչ հետո աշխուժացան: Մոթմոթը արմունկով բզեց Անկյունավորին: Վերջինս ոտքերի տակից քաշեց սեւ, հին պայուսակը: Ծնկներին դրած պայուսակում էր լցնում բաժակը, երեք անգամ: Իբր թե կոնսպիրացիա էր:

Ավտոբուսը ցատկոտելով գնում էր անհարթ ճանապարհով: Երբեմն լույսեր էին երեւում:

Բոմժերը ճանապարհը ֆնած շարունակեցին: Ավտոբուսում որեւէ հետաքրքիր դեմք չկար:

Ես դեռ հետաձգում էի հիշողության ամփոփումը, գնացքում ավելի հարմար կլիներ հավանաբար:

Կայարանում մոտ երկու ժամ անցկացրի: Բուֆետն աշխատում էր: Հետո էլ զբաղմունք կար, սպասասրահը սակավամարդ չէր: Այս հեռավոր ու փոքրիկ կայարանում էի զգում թափառական կյանքի առաջին տպավորությունները, մենակ, գիշերը գնացքի սպասելիս: Ավտոբուսը եւ ինքնաթիռը հաշիվ չէին, ոչ էլ գարնանային մեր ուղեւորությունը բրիգադով Նովոսիբիրսկից մինչեւ այս քաղաք:

Գիշերվա երկուսին նստեցի Տաշքենդ-Նովոսիբիրսկ գնացքը: Միայն ընդհանուր վագոնի տոմս կար: Լավ է, հաջողվեց նստելու տեղ գտնել: Կարծում էի, եթե տոմս ունես, տեղդ ապահովված է: Կողքի տեղում էի նստել: Շախմատային էյուտների ռուսերեն գիրքը եւ Ցարենցի փոքրիկ հատորյակը դրեցի սեղանիկին, որն անհրաժեշտության դեպքում նույնպես նստարանի պիտի վերածվեր: Դիմացս տարեց կին էր, համակրելի դեմքով: Ձախ կողմում, որ բաժանված էր մեզնից անցումով, գնչուների խումբ էր տեղավորվել: Ամեն նստարանին՝ կին եւ երկու երեխա, իսկ տղամարդիկ վերեւում էին փռվել, մեկի ոտքերը տեսա: Ներքեւում իրար հենված ֆնել էին, մի երեխա էլ մեր վերեւում էր ֆնած, ութ-տասը տարեկան աղջիկ: Երբ իրեն տեղավորում էի երրորդ հարկում, ֆնի մեջ բլբլացրեց: Կանայք տգեղ էին եւ անհրապույր, զուտկ կինոների գնչուական ռոմանտիկայից, որ այնպես շռայլորեն օժտում են նրանց ռեժիսորները:

Երկու խցիկ այն կողմ մի կին էր երեւում, առայժմ միակ հետաքրքրությունը շրջակայքում: Նստած կարծես ջահել աղջիկ լիներ, երբ անցավ կողքովս, տպավորությունը փոխվեց: Անմիջապես հետո խոշորակազմ կապիտանը եկավ, որին տեսել էի նրա հետ խոսելիս:

- Էյ, կապիտան,- ձայն տվեց գնչու կանանցից նիհարը, նրա բերանը ծռված էր, ականջներին չափազանց մեծ օղեր էին, հարբած էր:

Ձինվորականը չլսելու տվեց:

- Լսիր, դո՛ւ,- շարունակեց գնչուհին եւ հայհոյեց:

Դեմքիս կինը դեմքը շրջեց պատուհանի կողմը: Գնացքի ծխելու:

Վագոնի ուղեկցորդը իր կուպեի մոտ խոսում էր կապիտանի հետ, համարյա նրա կազմվածքի ուզբեկ էր, վերնաշապիկի առանցքից երեւացող մազոտ փորով: Կապիտանը փող դրեց նրա գրպանը:

Կինը հարթակում էր: Սիգարետ վառելով կանգնեցի մյուս դռան մոտ: Կապիտանը բացեց դուռը:

- Արի,- ասաց ցածրաձայն:

Քիչ հետո հինգ-վեց տարեկան մի աղջիկ փորձում էր բացել կուպեի դուռը:

- Ինչ ես ուզում,- մյուս կողմից գալով հարցրեց ուզբեկը:

- Ես տեսա, որ մամաս այստեղ մտավ,- թոթովեց երեխան:

- Նա քո մաման չէր,- ուզբեկը փոխեց դեմքի արտահայտությունն ու ժպտաց ինձ:

Աղջիկը գլխիկոր հետ դարձավ:

Սպասում էի, թե երբ է բացվելու դուռը, զբաղմունք էի գտել: Ինձ հետաքրքրում էր՝ նրանք ամուսիններ էին, ծանոթներ, թե՞ պատահական պատմություն է: Երեխայի արարքը հուշում էր, որ կապիտանը նրա հայրը չէր:

Վերջապես կինը դուրս եկավ: Հավանաբար երկար նայեցի նրան, քնքիծաղեց: Գնաց իրենց խցիկը, անհետացավ խորքում, ֆնած երեխային էր նայում, նորից երեւաց ու նստելով անմիջապես գլուխը գցեց կրծքին: Կապիտանը իջավ, նա ավելի էր ուռեցրել այտերը:

Փոփոխություններ լինում էին. նոր բարձրացողները, ջանալով չխանգարել ֆնածներին կամ ամենեփին ուշադրություն չդարձնելով, տեղ էին զբաղեցնում, որից հետո ֆնում էին կամ նստում պաղած տեսքով, ինչպես ես:

Գիշերային ընդհանուր վագոնը վաս հոտ արձակող պահածոյի էր նման:

Այնուամենայնիվ մի էյուտ լուծեցի:

Երկրորդ գիշերը չէի ֆնում:

Բառնաուլում տարեց կնոջը մի աղջիկ փոխարինեց: Եկավ գրեթե շիկնած դեմքով, միայն գլխաշորը հանեց, ազատելով շեկ մազերը:

- Այստեղ ազա՞տ է,- հարցրեց նստելուց հետո:

Ես գլխով արեցի:

Լուսավոր դեմք ուներ, Նինայի պես: Նա էլ կսկսի հաճախակի գնացքով գնալ, գիշերային ուղեւորություններ, պատահական մարդիկ... Չէր սիրում գնացքը, ամեն կարգի մարդ լցվում է... Ինան համարձակ է, նա հավանաբար խոսակցություն կբացեր դիմացը նստած երիտասարդի հետ, հենց այնպես, ժամանակը լցնելու համար, գուցե եւ ուշադրություն չդարձներ, նայած տրամադրության... Գուցե այդ պահի տրամադրությունը որոշիչ լիներ նրա կյանքում: Խոսեր, ծանոթանար, կաղ հաստատեր, սիրահարվեին... Եթե անտարբեր մնար, ասեմ, հոգնած էր, ֆնաս, կամ սեւամազ երիտասարդը չարժեր ուշադրության, կիջներ իր կայարանում, եւ երկուսն էլ կշարունակեին իրենց կյանքը տարբեր ուղղություններով... Հիմա էլ ենք շարունակում տարբեր ուղղություններով... Կարծես չէին եղել բոլոր սիրո ամիսները, ոչինչ չէր եղել...

Հանկարծ տեսա, որ աղջիկը ձեռքը շարժում է աչքերիս դիմաց, կույրի տպավորությո՞ւն էի թողել:

- Տարօրինակ է,- ասաց նա պարզորեն,- ինչո՞ւ քեզ այդպես սեւեռուն ինձ նայում:

- Ներեցեք,- հանկարծակիի եկա,- շախմատային խնդիր էի լուծում:

- Բայց գիրքը Ձեր առջեւում է,- թերահավատությամբ նայեց աղջիկը:

- Ես մտքիս մեջ էի լուծում, ներեցեք, տարվել էի ամբողջովին:

- Զարմանալի է,- արտաբերեց աղջիկը եւ լռեց:

Թերեւս ավելի զարմանալի էր, որ ինքը խոսակցության առիթ է տալիս, իսկ այս սեւամազը չի շարունակում:

Դուրս եկա հարթակ:

Ծուռբերան գնչուհին եկավ, այսինքն ամբողջ դեմքն էր ծուռ:

- Սիգարետ տուր,- պահանջեց:

Շատ տգեղ կին էր:

Տվեցի, վառեցի, շնորհակալություն չհայտնեց, հոռանջում էր, ծխում, գլուխը ֆորում:

Սիգարետը կեսից գցեցի եւ վերադարձա:

Աղջիկը գրքերս էր նայում:

- Կներեք,- ասաց,- կարելի էր, չէ՞:

Մի հատկություն արդեն դրսեւորել էր, անում էր, հետո էր հարցնում:

- Իհարկե,- ասացի,- շախմատ խաղո՞ւմ եք:

- Ինձ այս մյուսի տառերը հետաքրքրեցին, ի՞նչ լեզու է:

- Հայերեն:

- Դուք կովկասցի՞ եք:

- Ոչ, հայ եմ:

- Հայերը կովկասցի չե՞ն,- զարմացավ նա:

- Ամենեփին:

Գնչուհին վերադարձավ օրորվելով: Որոշել էր փոխհատուցել սիգարետի դիմաց: Նստեց իրենց նստարանի ծայրին, ոտքերն անցումի մեջ:

- Արի բախտդ նայեմ,- ասաց ինձ,- դու ոնց որ համարյա գնչու լինես, ի՞նչ ազգ ես:

- Հայ եմ:

- Օ՜... Հայերն էլ հին ժողովուրդ են: Դուք վերջապես պարզեցի՞ք եվրոպացի՞ ես, թե՞ ասիացի:

- Մենք ոչ Եվրոպա ենք, ոչ Ասիա,- պատասխանեցի ծիծաղով,- իսկ դուք գտա՞ք ձեր հայրենիքի տեղը...

- Օ՜, խոսքի տակ չես անում... Ո՞ւր ես գնում:

- Եթե բախտ բացող ես, առանց իմ ասելու կիմանաք:

Աղջիկը ժպտաց:

- Գնացքը Նովոսիբիրսկ է գնում, բայց դու այնտեղ չես մնա,- շարունակեց գնչուհին:

- Իհարկե, հավանաբար Հայաստան եմ գնում:

Կարելի էր մի քիչ թարմանալ՝ աղջկա ներկայությամբ:

- Դու Հայաստան չես գնում,- գնչուհին զննեց ինձ,- ես չէի կարող գուշակել, թե ուր ես գնում, որովհետեւ ինքդ էլ չգիտես:

Համենայն դեպս հարմարեցրեց:

- Ես Հայաստան եմ գնում,- պնդեցի վստահորեն,- կիջնեմ Նովոսիբիրսկում, ինքնաթիռի տոմս կառնեմ եւ կթռչեմ Երեւան:

- Հնարավոր է,- համաձայնեց գնչուհին,- բայց մի պնդիր, դու դեռ հաստատ չգիտես, թե ուր ես գնալու... Հայաստան՝ հնարավոր է... Գուցե իջնես այս գեղեցկուհու հետ... կամ վերադառնաս այնտեղ, որտեղից եկել ես,- գնչուհու ուշադիր հայացքը զննում էր ինձ,- չգիտես, թե մի ժամ հետո ինչ կկատարվի:

- Եթե ամեն ինչ բխում է պատահականությունից, ուրեմն գուշակությունը սուտ է կամ անհնար:

- Ես չեմ գուշակում, ես տեսնում եմ: Ահա, ես տեսնում եմ, որ այս աղջիկը Նովոսիբիրսկ չի գնում: Ճի՞շտ է, գեղեցկուհի:

Աղջիկը ժպտալով գլխով հաստատեց:

- Դա ես էլ տեսա,- ասացի ծիծաղելով,- առանց ճամպրուկի գնացք նստեց, մի փոքրիկ պայուսակով, վերարկուն չհանեց, ուրեմն կարճ տարածություն է գնում:

- Դու չտեսար, դու ենթադրեցիր, իսկ ես տեսնում եմ դեմքիդ, աչքերիդ մեջ... Դու չզգացիր էլ, որ ցնցվեցիր, երբ ասացի վերադառնալու մասին, ուրեմն այդ միտքը քո ներսում կա... կամ հեռանում ես կամքիդ հակառակ:

Զգաստացա, գնչուհին վաս չէր խաղում:

Զարմանալի է, որ բացում էր այդ կարճատեւ խաղաթուղթը, կարող էր դրա հիման վրա կառուցել իր գուշակությունը եւ աղբեցնել պարզապես:

- Բայց դա էլ է ենթադրություն: Դուք մի երկու տարբերակ կրակեցիք՝ ուշադիր հետեւելով, թե որին ինչպես կարձագանքեմ... Հետո արդեն Ձեր փորձված աչքը կորոշեր, թե որի մեջ խորանամ: Այսինքն ոչ գուշակություն, ոչ էլ պայծառատեսություն... ընդամենը դիտողականություն եւ տրամաբանություն:

- Ուզում ես ասել, որ այս գեղեցկուհին քեզ դուր չի՞ եկել:

- Իսկ դա արդեն սադրանք է:

Աղջիկը կարճ ծիծաղեց:

- Դու ինձ հետաքրքրեցիր, երիտասարդ,- գնչուհին թարմանում էր,- եթե մի սիգարետ էլ հյուրասիրես. գուցե կարողանամ հոգիդ տեսնել:

- Դուք էլ ինձ հետաքրքրեցիք,- ընդառաջեցի միանգամից,- մի տուփ կտամ, որովհետեւ մինչեւ հիմա դա ինձ չի հաջողվել:

Թեեւ օրական մի տուփ չէի ծխում, գրպանում երկուսը պահելը սովորություն էր դարձել, չհաշված պայուսակինը:

- Օ՜... այսքանով սիրտդ հոգին էլ կտեսնեմ... հեռվից հեռու:

Նորից կրակոց:

Աղջիկը նույնպես նկատելիորեն հետաքրքրվել էր: Գուցե ֆնածներին խանգարում էին, բայց ոչ ոք դիտողություն չէր անում:

- Իսկ վճարելո՞ւ ես,- չարաճճի ժպիտով հարցրեց գնչուհին, ինչքան որ հնարավոր էր այդպիսի տգեղությամբ չարաճճի երեւալ:

Նա Բելովի պես տնտղում էր ինձ, ամեն մի հարցով ջանում էր ինչ-որ բան պարզել: Չէի զարմանա, եթե շուտով կյանքս պատմեր ինձ:

- Փող տեսնում եմ... Ոչ շատ: Շատ փող ունեցողը մենակ չի ճամփորդի,- մեկնաբանում էր իր ենթադրությունները,- գնչուհուն տալու համար կճարվի, ուրում տեղ լինի: Թողնում եմ քո կամեցողությանը... Համաձայն ես, փող կտաս, եթե զգաս, որ ճիշտ եմ ասում: Դու ժլատ չես, կամեցող ես, բարի...

- Եթե մարդկանց հաճելի խոսքեր ասեք, հեշտությամբ կհավատան Ձեզ:

- Վատ մարդիկ ուրիշներին չեն հավատում, բայց իրենց ուրիշը գիտեն... Ես ասում եմ իրենց ուրիշ եղածը, ինձ չեն կարող չհավատալ...

- Ինքնախաբեության մեջ ընկածները նո՞ւյնպես:

- Կան կույր մարդիկ, նրանց ուժեղ դոզա է պետք, որ հավատան... Սակայն ես չեմ փորձում աղացուցել, ես ճշմարտությունն եմ ասում, մնացածն իր գործն է, ինձ չի հետաքրքրում: Եթե ինձ չի ուզում հավատալ, իր հոգում արդեն կռիվ է սկսվում,- հրջաց գնչուհին:

Գարշելի կնիկ էր, ահավոր տգեղ, միայն բերանը եւ վերեւի ցցուն ատամները կայլանդակեին ամենագեղեցիկ դեմքը, հոտվելը, մասը հիքը մտցնելը, կարծես դիտավորյալ ավելի էր այլանդակվում եւ խոսում էր ծամածռվելով, բառերը բերանից գլորելով:

Վերջը՝ սեպտեմբերի 7-ին

«Ազատությունը պահանջում է ավելի շատ բարգավաճում, իսկ բարգավաճումը՝ ավելի շատ ազատություն»

Հայտարարում է վարչապետ Էրդողանը՝ ներկայացնելով կառավարության կազմը նորընտիր նախագահ Աբդուլլահ Գյուլին

Թեեւ նախապես հայտարարվել էր, որ վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանն օգոստոսի 31-ին կառավարության կազմը կներկայացնի նորընտիր նախագահ Աբդուլլահ Գյուլին, սակայն դա, ինչպես եւ երդման արարողությունը, կատարվել է նախատեսվածից մեկ օր շուտ: Ինչպես տեղեկացրել էինք նախորդ համարում, Գյուլը հաստատել է Էրդողանի նոր կառավարության կազմը, որը 60-րդն է Գյուլի նախագահի ընտրությամբ ազատված արտգործնախարարի պատասխանում նշանակվել է պետնախարար եւ Եվրամիության հետ հարաբերություններում գլխավոր բանակցող Ալի Բաբաջանը: Օգտվելով առիթից նշենք, որ Բաբաջանը 1967-ին ծնվել է Անկարայում: 1985-ին գերազանց ավարտել է Անկարայի Ֆոլեջը եւ նույն թվին ընդունվել է Միջինարեւելյան տեխնիկական համալսարանի ճարտարագիտության ֆակուլտետը: 1989-ին

ստանալով գերազանցի ավարտական դիպլոմ համալսարանից, նա կատարելագործել է ուսումը, իսկ 1992-94-ին որպես խորհրդական աշխատել է ԱՄՆ-ի ֆինանսական մասնավոր ընկերություններում: Ի դեպ, Բաբաջանը պետնախարարի պատասխանատու էր զբաղեցրել նաեւ էջեփիթի կոալիցիոն 58-րդ կառավարությունում: Ամուսնացած է, ունի երկու զավակ, տիրապետում է անգլերենի:

ԵՄ-ի հետ հարաբերություններում գլխավոր բանակցող Ալի Բաբաջանի նշանակումն արտգործնախարարի պատասխանում արտահայտում է եվրոպական այս կառույցի հետ Թուրքիայի հարաբերությունները զարգացնելու Էրդողանի կառավարության վճռականությունը:

Նոր կառավարության առաջին նիստը գումարվել է երեկ, իսկ այսօր Թուրքիայի ազգային մեծ ժողովին՝ Մեջլիսին կներկայացվի նրա ծրագիրը: Սեպտեմբերի 3-ին դա քննարկվի, իսկ սեպտեմբերի 5-ին Մեջլիսում կդրվի նոր կառավարության վստահության քվեի հարցը:

Վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը ծնվել է 1954 թ. Ստամբուլում, որտեղ էլ ստացել է միջնակարգ կրթությունը: Այնուհետեւ նա ուսումը շարունակել է «Մարմարայի» համալսարանի տնտեսագիտության եւ առեւտրի ֆակուլտետում: 1976-ից սկսել է զբաղվել քաղաքականությամբ, զբաղեցնելով Էրբաքանի «Ազգային փրկության» կուսակցության երիտասարդական կազմակերպության, ապա եւ Ստամբուլի քաղաքային վարչության ղեկավարի պատասխանները: 1980-ի սեպտեմբերի 12-ի զինվորական հեղաշրջումից հետո աշխատել է մասնավոր ընկերություններում, իսկ 1983-ի անդամակցել է վերոհիշյալ կուսակցության հենքի վրա ձեւավորված «Բարություն» կուսակցությանը: 1994-ի մարտի 27-ին Էրդողանն ընտրվել է Ստամբուլի քաղաքապետ, իսկ 1997-ի դեկտեմբերին Սղերդում արտասանած բանաստեղծության համար թուրքական իրական նախկին օրենսգրքի 312-րդ հոդվածով, որը չարաբաստիկ 301-րդի նախնական տարբերակն էր, զրկվել է պատասխանից, ապա եւ դատապարտվել բանտարկության:

2001 թ. օգոստոսի 14-ին Էրդողանն իր զինակիցների հետ, որոնց թվում էր Աբդուլլահ Գյուլը, հիմնադրել է «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցությունը եւ ընտրվել կուսակցության գլխավոր նախագահի պատասխանում: Վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանն ամուսնացած է (Էմինե խանումի հետ), ունի չորս զավակ:

ՀԱՍՈՆ ՉԱՔԻՐՅԱՆ

Թուրքիայում:

«Ջանֆայա» պալատում նորընտիր նախագահի հետ մեկուկես ժամ տեւողությամբ հանդիպման ավարտին վարչապետ Էրդողանը նոր կառավարության մասին պարզաբանումներ է տվել լրագրողներին, ապա եւ հայտարարել. «Մենք նոր նպատակներ ենք դրել Թուրքիայի առջեւ, դրանք են. ազատությունն ու բարգավաճումը: Ազատությունը պահանջում է ավելի շատ բարգավաճում, իսկ բարգավաճումը՝ ավելի շատ ազատություն»:

Ի տարբերություն 22 նախարարներից կազմված նախորդ՝ 59-րդ կառավարության, Էրդողանի նոր կառավարությունը բացի վարչապետից ունի 24 նախարարներ: Վարչապետ Էրդողանը փոխել է բոլոր երեք փոխնախարարներին, պետնախարարների թիվը 6-ից բարձրացրել 8-ի, իսկ ներքին գործերի նախարար Աբդուլֆադիր Ավսուին, մշակույթի եւ զբոսաշրջության նախարար Աթիլլա Քոչին, ինչպես նաեւ շրջակա միջավայրի եւ անտառ-տնտեսության նախարար Օսման Փեփեին չի ընդգրկել նոր կառավարության կազմում: Այսինքն նրանք պատասխանվել են:

Ավսուին ներքին գործերի նախարարի պատասխանում փոխարինել է Բեքիր Աթալայը, Քոչին՝ ընդդիմադիր Ժողովրդա-հանրապետական կուսակցության նախկին գլխավոր քարտուղար Էրթուղրուլ Գյունայը, իսկ Փեփեին՝ Վեյսել Էրոլլուն:

Բաքվի նորակառույց շենքի փլուզումը պետք է զգուշացում լինի նաեւ մեզ համար

«Ազգն» արդեն տեղեկացրել է Բաքվում օգոստոսի 28-ին տեղի ունեցած ողբերգության մասին, որտեղ 11-հարկանի նորակառույց շենքի փլուզման զոհերի թիվը երեկ հասել էր 12-ի: Պատահարի վայրում դեռ աշխատում են արտակարգ իրավիճակների ադրբեջանական գերատեսչության աշխատակիցները: Ոչոչ տվյալների համաձայն, փլատակների տակ են դեռ գտնվում 5 բանվոր, որոնց բջջային հեռախոսները երեկ արդեն չէին պատասխանում զանգերին:

Ամենայն հավանականությամբ տեղական «Մութֆեքիր» շինարարական ընկերության ղեկավարները ձերբակալվել են, տարվում է քննություն, բայց արդեն իսկ կորուստները զգալի են: Առավել ուշագրավ է, որ շատ փորձագետների կարծիքով ու գնահատականներով, Բաքվում կան [illegible] բազմահարկ 100-ից ավելի նորակառույց շենքեր, որոնք ենթակա են քանդման թեկուզ միայն հորիզոնական գծից շեղումների պատճառով: Միեւնույն ժամանակ, ադրբեջանական լրատվամիջոցները հիշեցնում են, որ Ադրբեջանի արտակարգ իրավիճակների նախարարության ստեղծման ժամանակ մոտ 200 նորակառույցների քանդման անհրաժեշտության մասին հայտարարությունից հետո դրանցից ոչ մեկի շինարարությունն անգամ չի դադարեցվել:

Մեր իրականությունը դժվար թե հեռու լինի շինարարության կտրվածքով Բաքվում տիրող իրավիճակից: Եվ եթե Բաքվում հնարավոր է առանց փաստաթղթերի շինարարություն իրականացնել, ապա հենց Երեւանում էլ թերեւ գտնվեն նման շենքեր: Իսկ եթե անգամ փաստաթղթային ձեւական կողմը պահպանված է, ապա բնավ էլ որեւէ երաշխիք չկա, որ նորակառույց ու «էլիտար» որակված շենքերը չեն փլվի:

Ժամանակին, երբ սովետական իրականության մեջ բնակարանային խնդիրը լուծեցին բազմահարկ շենքերի ջունգլի հիշեցնող թաղամասերի կառուցմամբ, դրանցում բնակվողները այնքան էլ գոհ չէին: Շենքի բարձր հարկից ներքեւ նայելիս մնում է զարմանալ, թե այդ կառույցը ինչու դեռ կանգնած է մնացել: Պանելային շարվածքն այնպիսի զիգզագներ է գծում, որ ադրենալինի սիրահարները կարող են այլ միջոցներ չփնտրել. բարձրահարկերի կտուրներից տեսարանը փոքի կարող է խանգարել նորմալ մարդկանց սրտի աշխատանքը:

Բայց ավելի կարեւոր է, որ այդ շենքերում հայտնված մարդիկ ժամանակին սկսեցին երանի տալ սալինյան շրջանում կառուցված բնակարաններին, որոնց ամրությանը կասկածելու ոչ մի առիթ գրեթե չի եղել մինչեւ օրս: Դրա փոխարեն կարծես գալու են ժամանակներ, երբ երանի տիտի ասվի սովետական շենքերին՝ ի համեմատություն նորակառույցների, որոնց սանդարտներին համապատասխանության առնչությամբ բավարարող տվյալներ ունենալու համար գուցե թե հարկ լինի Երեւանն ամբողջությամբ շրջել:

Ինչեւէ, Բաքվում պատահածը պետք է զգուշացում հնչի մեզ համար: Բայց թե ո՞վ է դրանով մտահոգ:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՄԵՂԵՏ ԿՈՐՈՒԾՆԵՐ

Կարմիր խաչը նշեց անհետ կորածների օրը

Կարմիր խաչի միջազգային կոմիտեն հատուկ հայտարարություն է արել աշխարհում անհետ կորած բազմահազար մարդկանց «ողբերգության» կապակցությամբ: Անհետ կորածների օրն ամեն տարի նշվում է օգոստոսի 30-ին:

Ժնեւում՝ Կարմիր խաչի կենտրոնակայանում տարածված փաստաթղթում կալանավորված քաղաքացիական անձանց համար պատասխանատու բոլոր մարդկանց կոչ է արվում այդ անձանց վիճակի եւ գտնվելու վայրի մասին հայտնել նրանց հարազատներին ու մերձավորներին:

Աշխարհում անհետ կորածների թիվը ստույգ հայտնի չէ: Պատերազմական տվյալներով, միայն Իրաքում 1980 թվականից մինչեւ օրս տարբեր հակամարտությունների ընթացքում կորել է 375 հազարից մինչեւ 1 մլն մարդ:

Ըստ Կարմիր խաչի, 1990-ականների սկզբներին Հարավսլավիայի մասնատման հետեւանքով անհետ կորել է 17 հազար մարդ: Անգոլայում նման մարդկանց թիվը 22 հազար է:

Քանի որ մերձավորների մահը մնում է իրավաբանորեն չձեւակերպված, զոհերի ընտանիքները չեն կարողանում նպաստ ստանալ եւ սեփականություն ժառանգել, երբեմն տարիներ շարունակ խղճուկ գոյություն քարշ տալով:

Կարմիր խաչն ընդգծում է, որ միջազգային իրավունքի տեսակետից անհետ կորած մարդիկ չպետք է լինեն. բոլոր զոհերի ինքնությունը պետք է պարզվի, կալանավորները պետք է արձանագրվեն, մահվան դեպքերը պետք է հայտնի դառնան հարազատներին:

Անհետ կորածների թվին հաճախ դասվում են նաեւ քաղբանտարկյալները: Մինչդեռ նրանք ունեն մարդկային վերաբերմունքի, մասնավորապես ընտանիքի հետ կապի իրավունք:

Իրաքում «Մահդիի բանակի» գործունեությունը սառեցվում է

Իրաքցի ազդեցիկ շիա հոգեւորական Մոքթադա Սադրը հայտարարել է, որ ինքը կես տարով սառեցնում է իր աշխարհազորի՝ «Մահդիի բանակի» գործունեությունը: Այդ ժամանակամիջոցում կառույցը վերակազմակերպվելու է:

Բացի դրանից, Սադրը իր ներկայացուցիչներին եւ կողմնակիցներին կոչ է արել համագործակցել պետանվտանգության ուժերի հետ եւ պահպանել «ինքնավերահսկողությունը»:

Սադրի հրամանը ընթերցվել է Քերբելա քաղաքում կազմակերպված մամլո ասուլիսում: Շիաների հայտնի սրբավայր Քերբելայում երեքշաբթի օրը բախումների ընթացքում, 50 մարդ է սպանվել, հաղորդում է Ռոյթեր գործակալությունը: Ոստիկանությունն արյունահեղության համար մեղադրում է «Մահդիի բանակին», որի ներկայացուցիչները, սակայն, մերժում են մեղադրանքները:

Ներկայումս Քերբելայում պարետային ժամ է հաստատված, բայց իրավիճակը խանգարվում է: Սադրի հրամանի մեջ մասնավորապես նշվում է, որ «Մահդիի բանակի» գործունեության սառեցման նպատակն առաջիկա 6 ամսում աշխարհազորի «գաղափարախոսական նկարագրի վերականգնումն է»:

Նեջեֆ քաղաքում Սադրի ներկայացուցիչը հայտարարել է, թե հրամանը «ենթադրում է նաեւ զավթիչների եւ մյուս ուժերի դեմ զինված պայքարի ժամանակավոր դադարեցում»:

Այս տարվա ապրիլին ԱՄՆ պատգամանության նախարարությունը «Մահդիի բանակը» բնութագրել է, որպես Իրաքի անվտանգությանն սպառնացող ամենամեծ վտանգ, որը «պահպանում է լարվածությունը միջդավանանքային հողի վրա»:

Շիա արմատական Մոքթադա Սադրը 2003-ի ամռանը «Մահդիի բանակն» ստեղծեց շիաների սրբավայր Նեջեֆ քաղաքում կրոնավորների վերահսկողությունը պահպանելու նպատակով: Աշխարհազորը պայքարել է Իրաք ներխուժած օտար ուժերի դեմ եւ մասնակցել են 2004-ի զանգվածային ապստամբությանը: Ենթադրվում է, որ «Բանակի» մարտիկները մի շարք հարձակումներ են կատարել սունիի իրաքցիների վրա:

«Մահդի բանակը» ազդեցիկ զինված ուժ է Իրաքի հարավում եւ Բաղդադում: Աշխարհազորայինների մոտավոր թիվը 60 հազար է:

Հրդեհների համար մեղադրվում է Հունաստանի կառավարությունը

Հունաստանում վերջին օրերին մոլեգնող հրդեհների վնասը գնահատվում է 3-5 մլրդ եվրո: Աթենքի «Իմերսիա» ֆինանսական թերթի տվյալներով, այրվել են 4,5 մլն ձիթենի, 60 հազար ոչխար եւ այծ: Ֆինանսների փոխնախարար Քրիստոս Ֆոլիասի խոսքերով, հրդեհների պատճառած վնասն անցնում է ներքին համախառն արդյունքի 9,6 տոկոսից: Դա հիմք է տալիս օգնություն խնդրելու ԵՄ համերաշխության հիմնադրամից:

Հրդեհների թիվը հետզհետե նվազում է: Ռոյթեր գործակալության տվյալներով, զոհվել են 64 մարդ: Իշխանությունները կասկածներ եւ փաստեր ունեն, որ հրդեհների գլխավոր պատճառը հրկիզումներն են: Մի քանի կասկածյալ ձերբակալված է: Կոստաս Կարամանլյուսի կառավարությունը 200 մլն եվրո է հատկացրել առավել շատ տուժած շրջաններին:

Միաժամանակ հաղորդվում է, որ հազարավոր հույն ցուցարարներ իրենց դժգոհությունն են արտահայտում հրդեհների օրերին իշխանությունների անբավարար գործունեությունից: Ֆրանսպրեսը նշում է, որ մասնավորապես Աթենքում երեկ եւ անցյալ օրը մոտ 10 հազար սեւազգեստ ցուցարարներ հարգել են զոհերի հիշատակը, ինչպես նաեւ մեղադրել են իշխանություններին, որոնք անցյալում անտեսել են հնարավոր հրդեհների վերաբերյալ արված նախազգուշացումները:

Ցուցարարները կառավարությանը մեղադրել են նաեւ այն բանում, որ հրդեհները կապված են շինարարության հարցերը կանոնակարգող օրենսդրության անկատարության հետ: Ենթադրվում է, որ հրձիգները անտառներն այրել են շինարարության համար տեղ բացելու նպատակով: «Գործող կառավարությունը ոչինչ չարեց ընկելու այն օրենքները, որոնք վնասում են շրջակա միջավայրին եւ թույլ են տալիս անօրինական շինարարություն» հայտարարում են ցուցարարները:

Հունաստանում սեպտեմբերի 16-ին կայանալիք խորհրդարանական ընտրությունների նախօրեին խոշոր հրդեհները կարող են որոշակիորեն ազդել կառավարող Պահպանողական կուսակցության եւ Սոցկուսի ուժերի հարաբերակցության վրա:

Պ. Ք.

Մարկոս Գրիգորյան



Իրանի գեղարվեստասերների շրջանում արդեն հայտնի նկարիչ էր Մարկոս Գրիգորյանը (ծնվել է Կոմոտկինում, 1930-ին մեկնել Թեհրան), երբ 1950-ին ընդունվեց Հռոմի գեղարվեստի ակադեմիա, ուր շուրջ տասը տարի աշխատեց, ցուցահանդեսներ ունեցավ Հռոմում, Փարիզում, Լոնդոնում: Իտալական շրջանի իրաբաշխական գործերին հաջորդեցին նոր-արտահայտչաբաշխական բնույթի աշխատանքներ, մի հանգամանք, որ բնական եւ ինքնատիպ արձագանքն էր պատերազմի ծանր տարիներից հետո Եվրոպայում իշխող արվեստի այն ուղղություններին, որոնց թեման մարդկային տխրությունը, ճնշվածությունն ու տառապանքն էին: Գրիգորյանը ստեղծեց մեծադիր կտավներ՝ նվիրված ցեղասպանության տառապյալներին ու իր հայրենակիցներին՝ Վանի գաղթականներին: Այդ նշանակալի գործերում ձեւախեղումները (deformation), ինչպես նաեւ ներկերի խառնուրդի մեջ օգտագործած հողն ու մոխիրը նպատակային են ու ավելի ազդեցիկ են դարձնում պատկերների հուզական բովանդակությունը:

1962-ին Մ. Գրիգորյանը հաստատվում է Նյու Յորքում, հիմնում է ցարդ գործող Արշիլ Գորկու անունը կրող մի պատկերասրահ: Այն դառնում է նկարչական արվեստի յուրատեսակ կենտրոն:

Մ. Գրիգորյանի ստեղծագործության վերջին շրջանը նվիրված է հողի թեմային՝ իբրեւ մարդկային բարձրագույն գործունեության ատյարեզ, հիմք ու գաղափար:

1990-ականների սկզբին, երբ Հայաստանը հոչակվեց անկախ պետություն, Գրիգորյանն իր եւ դստեր՝ Սաբրինայի ուժերով հավաքած արվեստի ու արհեստի հնագույն նմուշների հարուստ հավաքածուն փոխադրեց Երեւան, որտեղ, Չարենցի անվան գրականության եւ արվեստի թանգարանում, տեղադրվեց նրա «Միջին Արեւելքի» թանգարան-հավաքածուն: Քիչ ավելի ուշ նկարիչը Գառնիում հիմնեց իր երկրորդ պատկերասրահ-ստուդիան, նպատակ ունենալով տարբեր երկրներից հրավիրված արվեստագետներին «պարգեւելու» անեծանոթ ու անօրինակ մի «ներկառնակ», որ-պիսին Հայաստանի բնաբխարհն է:

ԸՍՏԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Կյանքի ճնշիչաղը

Կամ խղճի դատապիտների ժամանակները

Մեր անավարտ կյանքի տոկոսները՞ն են դրանք փոխանցվում: Ծագումով պարսկահայ էինք համարում Մարկոս Գրիգորյանին, չնայած ծնվել է ռուսական Կոմոտկինո քաղաքում: 1948-ին սովորել է Թեհրանի Քամալ էլ Մոլք արվեստի դպրոցում, 1950-ին Հռոմի գեղեցիկ արվեստների ակադեմիայում աշակերտել պրոֆ. Ռոբերտո Մելլիին: 1951-ից արդեն տարբեր երկրներում ունենում է անհատական ցուցահանդեսներ, 1956-ից անդամակցում միջազգային բիենալեների ժյուրիներին: Այդ տարիներին գեղանկարչության մեջ ձեւավորված մի նոր ուղղության՝ հողարվեստի հարողներից մեկն էր: 70-ականներին Նյու Յորքում հիմնում է «Արշիլ Գորկի» պատկերասրահը, 1993-ին Միջին Արեւելքի թանգարանը՝ Երեւանում: Եթե մի հրաշքով երկրորդ կյանք տվեր Մարկոս Գրիգորյանին, երեւի շատ զոջալու էր իր այս վերջին քայլի համար: Երեւանի Միջին Արեւելքի թանգարանը ճակատագրական եղավ:

Մեկ անգամ իրեն տեսա հենց այդ թանգարանում, հայտնվեցի շատ հաճելի, ընտանեկան միջավայրում: Տաք, արեւալույսով ողողված սրահի կենտրոնում հյուրընկալ սեղանն էր, դիմացին գորգագործ կինը դազգահի մոտ լուռ աշխատում էր, շուրջը՝ խոտ ու գոյգ: Մարկոն մեկ դուստր ուներ՝ Սաբրինան. նա շատ ջահել մահացավ: Այդ օրը Սաբրինայի ծննդյան տարեդարձն էր, մահից 20 տարի էր անցել, բայց պարսկահայ իր բարեկամները ընտանիքներով այցելում էին, շնորհավորում նրան: Թանգարանը հիմնադրեց դստեր հիշատակին: Միջին Արեւելքի թանգարանի հավաքածուն Մարկոն իր կյանքի գործն էր համարում, սա հավաքորդի սոսկական նախասիրություն չէր կամ զբաղմունք: «Այն չէ, որ գնաս Վերնիսաժ ու մի իր գնես: Ես նույն առարկայի պատմությունն եմ վերականգնել, ժամանակի մեջ դրա զարգացման նմուշները տարիներ շարունակ հավաքել եմ»:

Ով այցելել է թանգարան, կհաստատի, որ Մարկոս Գրիգորյանի հավաքածուն իր տեսակի մեջ բացառիկ է, միջինարեւելյան, հայկական, պարսկական, ռուսական՝ առօրյա կենցաղում օգտագործված հին, որոշակի ժամանակաշրջան բնութագրող իրեր (կարի մեքենաներ, սկիհներ, գրամոֆոններ, ինքնաեռներ, կարգեսներ, գորգեր, ծոռակներ, փականներ եւ այլն), մշակույթի նշանակությամբ նմուշներ, XV-XVIII դդ. տուբ գրքեր, գեղանկարներ, հազվագյուտ հնագիտական գտածոներ (շումերական շրջան), արվեստաբանական գրքեր, կատալոգներ, լուսանկարներ եւ այլն:

1992-ին որոշեց հավաքածուն նվիրել Հայաստանին, մասնագիտական հանձնաժողովը բավականին բարձր գնահատեց (մոտ 1,5 մլն դոլար): Դանդաղ ժամանակավոր հանգրվանեցին Երեւանի գրականության եւ արվեստի թանգարանի դահլիճներից մի քանիսում (եւ մինչեւ այսօր այնտեղ են): Թանգարանային առանձին տարածք (կառույց) տրամադրելու իշխանությունների խոստումները մնացին խոստում (Երեւանի կենտրոնում նոր թանգարանի հավակնություններն առնվազն միամտություն է):

Արդեն մի քանի տարի գրականության եւ արվեստի թանգարանի տնօրենությունը դժգոհություն էր հայտնում զբաղեցված դահլիճների համար: Մարկոն դառնացած էր. «12 տարի այս թանգարանի հետ ապրեցինք, հիմա ինձ չեն կարող հանել, միջազգային օրենքներով չեն կարող» (Հայաստանում միջազգային օրենքս ո՞րն է): Չէր պատկերացնում, որ ամբողջ մի կյանքի գործ. բացառիկ հավաքածու կարելի է նվիրաբերել եւ դա կարող է հասցե չունենա, տեր չունենա, մտածում էր անգամ հետ վերցնելու մասին: Վատ էր զգում, չէր ուզում, որ այս բաների մասին սփյուռքում իմանան, հայրենիքից երես թեքելու նրանց հուսահատությունն էր պատկերացնում: Իր մասին երբ հարցրի, անսպասելի պատասխան տվեց. «Իմ մասին: Ես ծնվել եմ եւ մեռնելու եմ շուտով: Ինչ կարեւոր են դրանք: Հայ լինելն է կարեւոր, թե ինչպիսի հայ եմ եղել»: Մարկոս Գրիգորյանը գիտե՞ր, թե ինչպիսի հայեր կան իր կողքին: Ի՞նչ վախ էր մտել օր ծերության նրա հոգում. անհայտ տեղ էր որոնում, որ իրեն չգտնեն: Աղշահար ես մնում, թե որ սատակի ձեռքն է բարձրացել 80 անց ծերունու վրա, հետագայի ի՞նչ ակնկալիքով: «Սպասում են մեռնեմ, որ այս բոլորը նկուղներն իջեցնեն», ասաց ինձ 2 տարի առաջ: Չարենցի արարքից հետո նույնն է կրկնել. «Եթե ինձ մի բան պատահի, թանգարանային հավաքածուն կհայտնվի Վերնիսաժում»: Միջին Արեւելքի թանգարանի ցուցանմուշները համարակալված ու մատենագրված են: Դրանք ազգային արժեք են, պետական սեփականություն: Կարելի՞ է արդյոք հույս ունենալ, որ Մարկոս Գրիգորյանի մահից հետո դրանք կունենան մշտական ցուցադրություն:

Կյանքն ինչ հանելուկներով է լի: Ճակատագիրը ինչ անակնկալներ է մատուցում մարդուն: Պարսկական արդի արվեստի հիմնադիրներից մեկն է համարվում Մարկոս Գրիգորյանը: Ինչ հարգանքի ու մեծարանքի է արժանացել այդ երկրում, պատմում են, որ Երեւան այցելած պարսիկ արվեստագետները նրան վարդեն էին ասում, խոնարհվում: Կդատկերացնե՞ր երբեւէ, որ տարիների խնամքով ամբողջացրած այդ յուրօրինակ հավաքածուն է իր կյանքի ողբերգական ավարտի պատճառը դառնալու: Հիշողությանս մեջ առկայծեց Լավինյա Բաժբեուկ-Մելիքյանի գունատ դեմքը, երբ Տերյան փողոցի իր տան դուռը ջարդել ու ավազակների մի խումբ տարել էր հոր՝ Ալեքսանդր Բաժբեուկ-Մելիքյանի տասնյակ գործեր: Ինչ անօգնական էր, ինչպիսի հուսահատություն արտահայտեց խեղճ կինն այդ տարիքում: Ինչ եղան այդ նկարները, իրավապահ օրգանները տեղեկացան, զբաղվեցին, թե՞ մեր հրապարակումները մնացին ձայն բարբառոյ յանապատի: Այսպես էլ չլինի՞ Մարկոս Գրիգորյանի պարագայում: Նրա մահը վրա հասավ անակնկալ՝ հեռախոսով խոսելիս, սրտի տագնապից. այդպես արձանագրվեց: Լավագույն առիթը իրավապահների համար՝ ձեռքերը լվանալու: Տուժողը չկա, գործը փակված է:

Մարկոս Գրիգորյանը ոչ միայն բացառիկ հավաքածուտիր էր, այլեւ խիստ յուրօրինակ արվեստագետ: Նորարար արվեստագետ էր՝ ինքնատիպ մտածողությամբ. 60-ականներին նա հարում էր կոնցեպտուալիստներին, մինիմալիստներին: Բնապահպան խնդիրները, որոնք շատ ակտուալ էին 60-ականներից, թերեւս «հողանկարչություն» կոչված ուղղության շարժառիթը դարձան: 1962 թ.-ին Նյու Յորքի ցուցասրահում ներկայացրեց իր «հողանկարչությունը»: «Իմ առաջին տունը» խորագրով առաջին աշխատանքը՝ աշխարհի, տիեզերքի մի հետաքրքրական վերաբերում էր, մի նոր հայացք՝ երկրին, զուգորդումներ՝ կյանքի, հողի, մահվան միջեւ:

«Ազգի» երեկվա (նաեւ այսօրվա) համարներում տեղեկացրել էինք, որ իշխանություններն ի դեմս մշակույթի նախարարության պատասխանատուների, հոգացել են հայրենի հողում Մարկոս Գրիգորյանի համար վերջին հանգրվան առպահովելու խնդիրը (քաղաքային պանթեոնում): Ինչ շնորհակալ գործ:

Իր սիրտը փշրված հեռացավ կյանքից, գուցե եւ խռոված հայրենի հողից:

ՄԵԼՔՈՆ ԲԱՂԱԼՅԱՆ

ԱՌԵՂԾՎԱԾՈՒԹՅՈՒՆ ՎԹԱՐ

Տասը տարի առանց Դիանայի

Աշխարհն արդեն 10 տարի ապրում է առանց լեդի Դիանայի եւ 10 տարի ամենայն մանրամասնությամբ քննում է արկածների սիրահար այս հիասքանչ կնոջ կենսագրությունը: Առավել ուշադրությամբ քննության է առնվում նրա մահվան առեղծվածը: Այսօր՝ ճակատագրական 1997 թվականի օգոստոսի 31-ից 10 տարի անց Ռուսաստանի հանրային հեռուստատեսությունը (ՕՐՏ) երկու ցուցադրություն ունի՝ «Իշխանուհի Դիանա. Վերջին օրը Փարիզում» եւ Ֆ. Միրենի «Թագուհի» ֆիլմը: Այս առեղծվածային կնոջ նկատմամբ հետաքրքրասիրությունը չի մարում:

Եվ ահա, օրերս բրիտանական Daily Express-ը մի նոր հաղորդագրություն հրապարակեց, որը կարող է սենսացիա դառնալ:

Պարզվում է, որ Լոնդոնի դատարաններից մեկում այժմ լսվում է Դիանայի մահվան գործը: Դատավարությունը խոստանում է անչափ հետաքրքրական մանրամասներ հրապարակել. ֆրանսիացի փրկարար Քրիստոֆ Պելան պատրաստվում է հանդես գալ «սենսացիոն» հայտարարությամբ:

Վկան համոզված է, որ Դիանայի մահը դժբախտ պատահարի հետեւանք չէր: Պելան պատրաստ է դա ապացուցել դատարանին: Նա, ով հանդես է գալու մի քանի օրից, պատրաստվում է հայտարարել, որ տեսել է լուսանկարիչ Ջեյմս Էնդերսոնի դիակը, եւ Էնդերսոնը, ակնհայտ է, վթարի չի ենթարկվել, այլ սպանվել է:

Իսկ Էնդերսոնը ՄԱ-6-ի եւ ֆրանսիական իշխանությունների լրտուն է եղել: Նա հետեւել է լեդի Դիանային եւ նրա սիրեցյալ Դոդի ալ-Ֆայեդին մի քանի շաբաթ շարունակ, մինչեւ ճակատագրական վթարի օրը: Տեղեկություններ կան նաեւ այն մասին, որ հենց Ջեյմսն է նստած եղել այն խորհրդավոր FIAT-ի ղեկի մոտ, որը բախվեց Դիանայի Mercedes-ին:

Փարիզյան ողբերգություններից երեք տարի անց Էնդերսոնի ածխացած դիակը հայտնաբերվել է այրված BMW-ի մեջ: Պաշտոնական վարկածի համաձայն, դա ինքնասպանություն է եղել: Բայց Քրիստոֆ Պելան համոզված է, որ կրակել են Էնդերսոնի գլխին: Իշխանությունները մինչեւ օրս էլ հայտարարում են, որ լուսանկարչի գանգը վնասվել է կրակի պատճառով: Բայց Պելան հայտարարում է, որ նրա գլխի վրա կրակոցի բացահայտ հետք կա:

Էնդերսոնի վախճանի մանրամասները բացառիկ կարեւորություն ունեն հետաքննության համար, որովհետեւ դրանք կապված են այն խորհրդավոր FIAT-ի հետ: Էնդերսոնը սպիտակ գույնի FIAT ուներ, որը Դիանայի վախճանից կարճ ժամանակ անց ներկվեց ուրիշ գույնով, ապա նաեւ վաճառվեց: Երբ Դիանայի ավտոմեքենան փորձաքննության էր ենթարկվում, հայտնաբերվեց, որ նրա կողային հայելու եւ թափքի վնասվածքները նույնատիպ են, ինչ եւ FIAT-ի վրա եղած վնասվածքները:

Տեղեկությունն այն մասին, որ Էնդերսոնի վրա կրակել են կասկածներ է ծնում, որ Դիանայի մահը նույնպես սպանություն է եղել՝ Դոդիի հետ իշխանուհու ամուսնությունը խափանելու համար:

Էնդերսոնը 1997-ի օգոստոսի վերջին շաբաթը եղել է Սարդինիայում, այնտեղ, ուր միասին հանգստանում (ավելի ճիշտ կլինի ասել՝ հանգստությունից փրկվում էին) Դոդին եւ Դիանան: Սիրահարված զույգը Փարիզ է վերադարձել օգոստոսի 30-ին: Վթարից 6 ժամ էլ չանցած Էնդերսոնը ինքնաթիռ նստելու համար գրանցվել է Օռլիի օդանավակայանում: Ինքնաթիռը ուղեւորվում էր Կորսիկա: Դրա հետ միասին, Էնդերսոնը հետաքննության ժամանակ հայտարարել էր, որ ինքը Փարիզի կենտրոնին մոտ չի եղել այն ժամանակ, երբ տեղի է ունեցել վթարը: Բայց ոչ մի իրական, փաստարկված ապացույց չի կարողացել ներկայացնել:

Մոնոպոլիայի մոտ գտնվող անտառում հայտնաբերված Էնդերսոնի մարմինն այնպես էր այլակերպվել կրակի պատճառով, որ ոսկրանությունից մեկ ամիս պահանջվեց ԴՆԹ-ի եւ ատամների ձեւի միջոցով դիակը ճանաչելու համար: Չնայած այն բանին, որ մահվան պաշտոնական վարկածը ինքնասպանությունն է, Պելան համոզված հայտարարում է, որ հնարավոր է՝ Էնդերսոնին շատ բան էր հայտնի Դիանայի սպանության կազմակերպման մասին:

Էնդերսոնի մահվանից մի քանի շաբաթ անց նրա գործատեղը թալանվել է: Գողացվել են լուսանկարչի անձնական իրերը: Բացի այդ, Էնդերսոնի այրին հայտարարում է, որ իր ամուսինը նախկինում երբեւէ չի եղել այն շրջանում, ուր գտնվել է նրա դիակը:

Սեպտեմբերը հետաքրքրական տեղեկություններ է խոստանում խորհրդավոր իշխանուհու սպանության բացահայտման գործում: Սպասենք:

Ս. ԳԱՍՊԱՐՅԱՆ

Փակվել է Թաշ-Մահալի դամբարանը

Հնդկաստանի Ագրա քաղաքում տեղի ունեցած անկարգությունների պատճառով փակվել է Թաշ-Մահալ աշխարհահռչակ դամբարանը: Դամբարանի տարածքում անկարգությունները սկսվել են այն բանից հետո, երբ մի բեռնատար վրաերթի է ենթարկել 4 մահմեդականի: Վրդովված ամբոխը այրել է 20 մեքենա, ջարդուփշուր արել ցուցափեղկեր: Ոստիկանները որքան էլ ցանկացել են սաստել անկարգությունները, դա նրանց չի հաջողվել: Բախումների արդյունքում սպանվել է մեկ մարդ, կան վիրավորներ: Այդ դեպքից հետո Ագրայում պարետային ժամ է հայտարարվել, ժամանակավորապես փակվել են բոլոր ուսումնական հաստատությունները:

Մ. Մ.

Հոգեհանգիստ

Գեղանկարիչ, հավաքորդ, Երեւանի Միջին Արեւելքի թանգարանի հիմնադիր, Երեւանի պատվավոր քաղաքացի Մարկոս Գրիգորյանի մահվան կապակցությամբ, ՀՀ մշակույթի նախարարի հրամանով ստեղծվել է թաղման գերատեսչական հանձնաժողով փոխնախարար Գ. Գյուրջյանի գլխավորությամբ: Մարկոս Գրիգորյանի քաղաքացիական հոգեհանգիստը կկայանա Երեւանի Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը սեպտեմբերի 1-ին, ժամը 12.00-14-00-ին: Աճյունը կամփոփվի նույն օրը Երեւանի քաղաքային պանթեոնում:

Քրիստինե Պետրոսյանը վեցերորդն էր

Իտալական Պավիա քաղաքում ընթացող ծանրամարտի Եվրոպայի պատանեկան առաջնության երկրորդ օրը մեդալները վիճարկվեցին քաշային երեք կարգերում: Այդ օրը Հայաստանից մրցահարթակ դուրս եկավ Քրիստինե Պետրոսյանը, որը մասնակցեց մինչեւ 53 կգ ծանրորդների մրցավեճին: 15-ամյա Քրիստինեն պոկում վարժությունում իրեն ենթարկեց 70 կգ ծանրությունը, որը 5-րդ արդյունքն էր մրցումների 16 մասնակիցների մեջ: Ընդ որում, նա ընդամենը 3 կգ-ով հետ մնաց այս վարժությունում բronզե մեդալ նվաճած ռուսաստանցի Քրիստինե Սոբոլից:

Հրում վարժությունում հայ մարզուհու արդյունքը 6-րդն էր: Նա բարձրացրեց 85 կգ եւ երկամարտի 155 կգ արդյունքով զբաղեցրեց 6-րդ տեղը: Իսկ ոսկե մեդալին արժանացավ բելառուսցի Իրինա Միշչուկը, որը երկամարտում ցույց տվեց 169 կգ (82+87) արդյունք: Արծաթե մեդալակիր դարձավ բուլղարուհի Սեւգինար Թոփալովան՝ 165 կգ (74+91): Բronզե մրցանակակիրը կրկին Բուլղարիայից էր՝ Մայա Իվանովան՝ 165 կգ (71+94), որը միայն անձնական ավելի ծանր քաշի պատճառով արծաթե մեդալը զիջեց իր հայրենակցուհուն:

Կանանց մրցաշարում մինչեւ 48 կգ քաշային կարգում չեմպիոնի տիտղոսը վիճարկեցին 9 մարզուհիներ: Ուժեղագույնը թուրք ծանրորդուհի Գյուլնազ Յանիկն էր, որը հաղթող ճանաչվեց 149 կգ (69+80) արդյունքով: Երկրորդ տեղը զբաղեցրեց բելառուսցի Վալենտինա Լիակհավետսը՝ 142 կգ (64+78): Բronզե մեդալակիր դարձավ ուկրաինուհի Յանա Դյաչենկոն՝ 140 կգ (61+79):

Տղամարդկանց մրցաշարում առաջնության պարգեւները վիճարկեցին մինչեւ 62 կգ քաշային ծանրորդները: 18 ծանրորդների մրցավեճում լավագույն արդյունքի հասավ ռուսաստանցի Անտոն Լուսինը՝ 249 կգ (109+140): Բավական համառ մրցապայքար ծավալվեց 2-րդ եւ 3-րդ տեղերի համար: Ի վերջո երկու ծանրորդներ՝ թուրք Հուսեյին Ասակը եւ բուլղարացի Սվետոսլավ Յուլիանովը երկամարտում ցույց տվեցին միեւնույն արդյունքը՝ 240 կգ: Բայց անձնական ավելի թեթեւ քաշի շնորհիվ արծաթե մեդալին արժանացավ թուրք ծանրորդը: Նրանց ընդամենը մեկ կգ-ով զիջեց 4-րդ տեղը զբաղեցրած հունգարացի Զոլթան Լերը:

Սուպերգավաթի մրցավեճը կնվիրվի Պուեբտայի հիշատակին

Այսօր Մոնակոյում Եվրոպայի Սուպերգավաթը կվիճարկեն Չեմպիոնների գավաթակիր իտալական «Միլանն» ու ՈւԵՖԱ-ի գավաթակիր իսպանական «Սեւիլիան»: Այդ խաղը նվիրվելու է օրերս սրտի նոպայից մահացած Անտոնիո Պուեբտայի հիշատակին: Ինչ խոսք, հոգեբանական առումով «Սեւիլիային» չափազանց դժվար կլինի խաղալը, սակայն կարծում ենք, որ թիմի ֆուտբոլիստներն ամեն ջանք կներդնեն հաղթանակ տոնելու եւ դրանով իսկ խաղընկերոջ հիշատակը մեկ անգամ եւս հարգելու համար:

Վերջին շրջանում տիտղոսների արժանանալը «Սեւիլիայի» համար սովորական է դարձել: Այժմ արդեն դժվար է հավատալ, որ մինչեւ 2005/06 թթ. մրցաշրջանում ՈւԵՖԱ-ի գավաթին տիրելը «Սեւիլիան» իր վերջին մրցանակը նվաճել էր հեռավոր 1948-ին՝ դառնալով Իսպանիայի գավաթակիր: 2006-ին Էյնդհովենում 4-0 հաշվով ջախջախելով «Միդլսբրոյին»՝ «Սեւիլիան» իր հաղթաշրջանի սկիզբը դրեց:

Վերջին 15 ամիսները «Սեւիլիայի» պատմության մեջ ամենահաջող ժամանակաշրջանն են: Խուանդե Ռամոսի կողմից թիմի ղեկը սանձնելուց հետո «Սեւիլիան» երկու անգամ նվաճել է ՈւԵՖԱ-ի գավաթը, դարձել է Իսպանիայի գավաթակիր եւ Սուպերգավաթակիր: Այժմ էլ թիմը հնարավորություն ունի եվրոպական ասպարեզում իր 4-րդ տիտղոսը նվաճել, եթե օգոստոսի 31-ին Սուպերգավաթի համար մրցավեճում հաղթի «Միլանին»: Հիշեցնենք, որ անցած տարի «Սեւիլիան» Մոնակոյում հիանալի ոճով, 3-0 հաշվով պարտություն էր մատնել Չեմպիոնների գավաթակիր «Բարսելոնին» եւ նվաճել էր Սուպերգավաթը:

«Միլանի» հետ առաջիկա հանդիպումը «Սեւիլիայի» համար լուրջ փորձություն կլինի: Եթե նկատի ունենանք գավաթային հանդիպումների արդյունքները, ապա Ռամոսի սաներն առանձնապես անհանգստանալու առիթ չունեն: Իսպանիայի Սուպերգավաթի հանդիպումներում Մադրիդի «Ռեալի» նկատմամբ ընդհանուր 6-3 հաշվով տոնած հաղթանակը 5-րդ անընդմեջն էր եզրափակիչ հանդիպումներում: Առավել դժվարին մրցախաղերից էր «Խեմպդեն Պարկում» մայիսին «Էսպանյոլի» հետ ՈւԵՖԱ-ի գավաթի եզրափակիչ հանդիպումը: Հիմնական եւ լրացուցիչ ժամանակից հետո հաշիվը 2-2 էր եւ մրցանակի բախտը վճռվեց հետխաղյա 11մ հարվածներով: Վճռորոշ հարվածը կատարեց Պուեբտան: Անցած մրցաշրջանում ակումբի պատանեկան ակադեմիայի սանը մշտապես ընդգրկվել էր թիմի կազմում: Նա չէր էլ կարող երազել, որ վերջին 15 ամսում 5 մրցանակ կնվաճի: Ցավոք, դաժան ճակատագիրը հնարավորություն չտվեց Պուեբտային այսօր էլ խաղադաշտ դուրս գալու:

«Բարսելոնի» հետ Սուպերգավաթի նախորդ խաղերում թիմին հաղթանակ էին պարգեւել Ռենատոյի, Ֆրեդերիկ Կանուտեի եւ Էնցո Մարեսկայի հարվածները: Ռենատոն ու Կանուտեն այժմ ընկան նաեւ «Սանտյագո Բեռնաբեու» մարզադաշտում՝ խոցելով «Ռեալի» դարպասը: Այնուհետեւ հետեւեց Չեմպիոնների լիգայի որակավորման 3-րդ փուլում ԱԵԿ-ի նկատմամբ վստահ հաղթանակը (2-0), եւ այժմ «Սեւիլիան» հիանալի հնարավորություն ունի իր պատմության մեջ առաջին անգամ հանդես գալու խմբային մրցաշարում: Նոր մրցաշրջանի շեմին թիմի կազմը զգալիորեն ուժեղացել է, եւ «Սեւիլիան» լուրջ մրցակցություն է ցույց տալու ինչպես եվրոպական ասպարեզում, այնպես էլ Իսպանիայի առաջնությունում:

Իր հերթին «Միլանն» էլ գերազանց մարզավիճակում է: Թիմի վետերան Ֆիլիպո Ինզագին, որը «Լիվերպուլի» դարպասը Չեմպիոնների լիգայի եզրափակիչում 2 գոլ էր խփել, ստուգողական հանդիպումներում էլ արդյունավետ խաղ է ցուցադրում: «Միլանը» միակն է, որին հաջողվել է 2 տարի անընդմեջ (1989, 1990 թթ.) նվաճել Սուպերգավաթը: Իտալական ակումբը քառակի Սուպերգավաթակիր է: Վերջին անգամ միլանցիներն այդ մրցանակին տիրել էին 2003-ին՝ 1-0 հաշվով հաղթելով «Պորտոյին»: Չեմպիոնների յոթակի գավաթակիրը 7 անգամ է վիճարկել Սուպերգավաթը, ինչը ռեկորդային ցուցանիշ է: Իսկ «Սեւիլիան» կնգտի երկրորդ տարին անընդմեջ նվաճել Սուպերգավաթը եւ կրկնել «Միլանի» նվաճումը: Թիմի երկրպագուները հուսով են, որ «Սեւիլիայի» լավագույն տարիները դեռեւս առջեւում են:

Ռոմիկ Խաչատրյանը տեղափոխվեց «Ունիվերսիտատյա»

Հայաստանի հավաքականի կիսապաշտպան Ռոմիկ Խաչատրյանը պայմանագիր է կնքել Ռումինիայի Կլուժ քաղաքի «Ունիվերսիտատյա» թիմի հետ: 29-ամյա ֆուտբոլիստը մինչեւ այդ հանդես էր գալիս ռումինական մեկ այլ ակումբում՝ «Ունիրիայում», սակայն վերջին շրջանում նա չէր ընդգրկվում թիմի հիմնական կազմում: Հիշեցնենք, որ ներկայում Ռումինիայում են խաղում նաեւ Արման եւ Արտավազդ Քարամյանները, որոնք ընդգրկված են «Պոլիտեխնիկ» թիմում:

Նալբանդյանը հաջող է մեկնարկել

Թենիսի ԱՄՆ-ի բաց առաջնությունում հաջող է մեկնարկել Դավիթ Նալբանդյանը: Առաջին փուլում նա պարտության է մատնել իսպանացի Իվան Նավարո-Պաստեսին (7-5, 7-6, 7-6): Հաջորդ փուլի ռաստեգիր են նվաճել նաեւ Ռոջեր Ֆեդերերը, Իգոր Անդրեեւը, Թոմաս Յոհանսոնը, Նիկոլայ Դավիդենկոն, Նիկոլաս Կիֆերը, Առնո Կլեմանը, Ֆերնանդո Վերդասկոն, Լլեյթոն Հյուիթը, Թիմ Հենմանը:

Կանանց մրցաշարում 2-րդ փուլի արգելքն էլ հաջողությամբ հաղթահարեցին Դինարա Սաֆինան, Եկատերինա Մակարովան, Ժյուստին Էնենը, Վերա Զվոնարյովան, Ելենա Դեմենտեւան, Վինուս Ուիլյամսը, Այրոնա Բոնդարենկոն, Վերա Դուշեվինան, Սերենա Ուիլյամսը:

ՉԵՄՊԻՈՆՆԵՐԻ ԼԻԳԱ

Խմբային մրցաշարում մնաց մեկ թափուր տեղ

Չեմպիոնների լիգայի որակավորման 3-րդ փուլի պատասխան հանդիպումներում խոշոր անակնկալներ չգրանցվեցին: Եվրոպական առաջատար ակումբները հիմնականում հաստատեցին իրենց բարձր կարգը եւ իրավունք ստացան պայքարը շարունակել Չեմպիոնների լիգայի խմբային մրցաշարում: Թերեւ միակ անսպասելի արդյունքը «Այաքսի» անհաջողությունն էր, որը երկու հանդիպումներում էլ զիջեց Պրահայի «Սլավիային» (0-1, 1-2): «Այաքսն» արդեն 2-րդ տարին անընդմեջ չի կարողանում խմբային մրցաշարի ուղեգիր նվաճել: Անցած տարի թիմի ճանապարհը փակեց դանիական «Կոպենհագենը»:

Բելառուսի չեմպիոն ԲԱՏԷ-ին չհաջողվեց սենսացիայի հեղինակ դառնալ «Սեյառաայի» հետ մրցավեճում: Սեփական հարկի տակ առաջին խաղում ոչ-ոքի (2-2) խաղալուց հետո հյուրընկալվելիս բելառուսները զիջեցին մրցակցին (0-2): Իսկ ահա Ուկրաինան խմբային մրցաշարում 2 ներկայացուցիչ կունենա: Եթե Կիեւի առավելության հասավ «Ցյուրիխի» նկատմամբ:

Բավական դժվարությամբ հաջորդ փուլ մտավ «Վերդերը»՝ հյուրընկալվելիս 3-2 հաշվով պարտության մատնելով Զագրեբի «Դինամոյին»: Դրամատիկ պայքարում անցավ Մոսկվայի «Սպարտակի» եւ շոտլանդական «Սելթիկի» մրցավեճը: Մոսկվայում խաղը ոչ-ոքի (1-1) ավարտելուց հետո սպարտակցիները ստիպված էին մրցակցի դաշտում հարձակողական խաղաոճ ընտրել: 26-րդ րոպեին նրանք 11 մ հարվածի իրավունք ստացան, սակայն Պավլյուչենկոյի հարվածը դիպավ դարպասապահին: Մեկ րոպե անց օգտվելով Շիշկինի կոպիտ սխալից, Սկոտ Մակդոնալդսը բացեց հաշիվը: Ճիշտ է, առաջին խաղակեսի ավարտին Պավլյուչենկոն խավեց մեղքը՝ հավասարեցնելով հաշիվը: Մինչեւ խաղավերջ հավասարակշռությունը չխախտվեց եւ հաղթողին որոշելու համար նշանակվեց լրացուցիչ ժամանակ: 115-րդ րոպեին արդեն «Սելթիկը» գոլ խփելու գերազանց հնարավորություն ստացավ, սակայն փորձառու Հեսելինկի 11 մ հարվածից հետո գնդակը հետ մղվեց հորիզոնական ձողից: «Սպարտակը» կարող էր կորզել հաղթանակը 119-րդ րոպեին, բայց նոպաստավոր դիրքից վրիպեց Բոյարինցեւը: Հարկ եղավ դիմել 11 մ հարվածաշարի օգնությանը: Ավելի հաջողակ էին «Սելթիկի» ֆուտբոլիստները, որոնք էլ հաղթեցին 4-3 հաշվով: Այժմ ընկավ «Սելթիկի» դարպասապահ Արթուր Բորուցը՝ հետ մղելով Տիտովի եւ Կալինիչենկոյի հարվածները:

Կայացած մյուս հանդիպումների արդյունքներն են՝ «Արսենալ»-«Սպարտա»՝ 3-0, «Էֆսբորգ»-«Վալենսիա»՝ 1-2, «Դինամո» Կիեւ-«Սարաեւո»՝ 3-0, «Կոպենհագեն»-«Բենֆիկա»՝ 0-1, «Ռուսենբորգ»-«Տամպերե»՝ 2-0: Ինչպես արդեն տեղեկացրել ենք, ԱԵԿ-«Սեւիլիա» հանդիպումը կկայանա սեպտեմբերի 3-ին:

Այսպիսով, Չեմպիոնների լիգայի խմբային մրցաշարի ուղեգիր նվաճեցին «Սելթիկը», Կիեւի «Դինամոն», «Շախտյորը», «Բեշիքթաշը», «Սեյառան», «Ֆեներբախչեն», «Վերդերը», «Սլավիան», «Վալենսիան», «Բենֆիկան», «Ռուսենբորգը» եւ «Արսենալը»: Նախորդ օրը նման հաջողության էին հասել «Գլազգո Ռեյնջերսը», «Լացիոն» ու «Լիվերպուլը»:

«Դինամոյի» հաջողությունը կասկած չէր հարուցում, ապա «Շախտյորին» պատասխան խաղում հարկ էր մեծ ջանքեր թափել «Զալցբուրգի» նկատմամբ ռեւանշի հասնելու համար: Նախորդ խաղի համեմատ Միրչա Լուչեսկուն թիմի մեկնարկային կազմում երկու փոփոխություն էր կատարել՝ խաղադաշտ մտցնելով Լեւանդովսկուն ու Լուկարելլիին: Խաղն անհաջող սկսվեց «Շախտյորի» համար: Արդեն 5-րդ րոպեին Մայերը առաջ մղեց «Զալցբուրգին»: Դաշտի տերերից ընդամենը չորս րոպե պահանջվեց, որպեսզի Լուկարելլին վերականգնի հավասարակշռությունը: Դրանից հետո դաշտի տերերը գոլային մի շարք պահեր ստեղծեցին, սակայն միայն 78-րդ րոպեին Կասիլյոյին 11 մ հարվածով հաջողվեց առաջ մղել «Շախտյորին»: Իսկ հաղթական գնդակը 86-րդ րոպեին խփեց Բրանդաուն:

Հաջողության հասան նաեւ թուրքական երկու ակումբները: «Ֆեներբախչեն» պատասխան խաղում էլ, հյուրընկալվելիս 2-0 հաշվով պարտության մատնեց «Անդերլեխտին»: Արդեն 3-րդ րոպեին Կեժմանը բացեց հաշիվը, ինչը փաստորեն վճռեց մրցակցության ելքը: «Բեշիքթաշն» էլ սեփական հարկի տակ 2-0 հաշվով

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Պետական գնումների գործակալություն» ՊՈԱԿ-ն (պատվիրատու) «ՊԳԳ-ՄԲԱՇՁԲ-07/135» ծածկագրով կազմակերպում է մրցակցային բանակցություններ՝ **«Երեւան քաղաքի Արցախի փողոցի /կայարանամերձ հրապարակից Արին Բերդի փողոց ընկած հատված/ վերակառուցման աշխատանքների /մաս 2/» ձեռքբերման նպատակով:** Հրավեր ստանալու համար անհրաժեշտ է 3615 ՀՀ դրամ փոխանցել «Արդբինինվեստբանկ» էրեբունու մասնաճյուղ «Բեջ-գալ» ՍՊԸ-ի N 247230066158 հաշվեհամարին եւ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող 8 աշխատանքային օրվա ընթացքում դիմել պատվիրատուին հետեւյալ հասցեով՝ ք.Երեւան, Կոմիտասի պ., 54/բ, հեռ. 28-93-25, հանձնաժողովի քարտուղար Զ. Մելիքսեթյանին:

Հրավերն անձին տրվում է անձը հաստատող փաստաթղթի, իսկ կազմակերպության անունից հանդես գալու դեպքում՝ նաեւ անձի լիազորությունները հավաստող համապատասխան փաստաթղթի հիման վրա: Հայտերը պետք է ներկայացնել մինչեւ դրանց բացման պահը՝ մրցակցային բանակցությունների հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվանից հաշված 10-րդ աշխատանքային օրը, ժամը 11.00-ն:

Տարածքում

VIVAcell

Ձեր ընտրանքը

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆԸ

«Ղ-Տելեկոմ» ՓԲԸ-ն դիմել է ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին՝

Հայաստանի Հանրապետության տարածքում 4 ԳՀց եւ 6 ԳՀց հաճախականության տիրույթներից համապատասխանաբար 3,650÷4,150 ԳՀց եւ 5,975÷6,475 ԳՀց շերտերում արբանյակային կապի 2 երկրային ամրակցված կայանի ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվություն ստանալու համար.

«Ղ-Տելեկոմ» ՓԲ ընկերություն

ՀՀ, ք. Երեւան, Արգիշտի 4/1, Հեռ. +37410568777
Ֆաքս. +37410569222 E-mail: info@vivacell.am

Առանց կանխավճարի ակցիան՝ մինչեւ հոկտեմբերի 1-ը

Ընդառաջելով բնակչության բազմաթիվ դիմումներին, «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ն մինչեւ ***2007թ. հոկտեմբերի 1-ը*** երկարաձգում է իր նախաձեռնած ակցիան հետեւյալ պայմաններով՝

այն բնակիչները, որոնք մինչեւ 2007թ. հոկտեմբերի 1-ը «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ կներկայացնեն դիմում գազաֆիկացման մասին, դիմումի ներկայացմանը հաջորդող 30 օրերի ընթացքում կկնքեն գազամատակարարման ցանցին միացման պայմանագիր եւ այդ պայմանագրով նախատեսված ժամկետում կվճարեն շինհավաքակցման աշխատանքների իրականացման համար հաշվարկված վճարի 80 տոկոսը, կազատվեն գազաֆիկացման համար 40 000 դրամ կանխավճարի մուծման պարտականությունից:

USAID | ՀԱՅԱՍՏԱՆ

ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԱՌԵՎՏՐԱՅՆԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Ըդվանսդ ինջինիրինգ ըսոշիեյթս ինթերնեյշնլ» կազմակերպության կողմից իրականացվող **ԱՄՆ ՄԶԳ-ի էներգաարդյունավետության նախագծերի առեւտրայնացման ծրագիրը** ընդունում է հետաքրքրվածության արտահայտման հայտեր տեղական ընկերություններից, որոնք ունեն էներգետիկ ծառայությունների մատուցման փորձ՝ ներառյալ

- շենքերի, շինությունների էներգետիկ աուդիտի իրականացում;
- էներգաարդյունավետ սարքավորումների (օրինակ՝ ջեռուցման եւ լուսավորման համակարգերի, շարժիչների, պոմպերի եւ այլն) ներմուծում, արտադրություն, տեղադրում եւ սպասարկում:

Ծրագրի նպատակն է մեծացնել էներգախնայողության նախագծերի վարկավորման հնարավորությունները եւ աջակցել էներգաարդյունավետության ծառայություններ եւ ապրանքներ առաջարկող ընկերություններին՝ վարկերի մատչելիության բարելավման եւ էներգախնայողության ոլորտում ծրագրերի իրականացման միջոցով: Բոլոր հետաքրքրված էներգետիկ ծառայություններ մատուցող կամ համապատասխան մասնագիտացում ունեցող ձեռնարկությունները կարող են դիմել գրասենյակ հետաքրքրվածության արտահայտման հայտով՝ ներկայացնելով հետեւյալ տեղեկությունները. կազմակերպության փորձը, աշխատակազմի որակավորումը, իրականացված ծրագրերը (աշխատանքները, առկա երաշխավորագրերը):

Հայտերը ներկայացնել «Ըդվանսդ ինջինիրինգ ըսոշիեյթս ինթերնեյշնլ» կազմակերպություն՝

Երեւան, Պուշկին 11 հասցեով մինչեւ **ս.թ. սեպտեմբերի 20-ը:** Տեղեկությունների համար զանգահարել (37410) 58-89-83 հեռախոսահամարով:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Պետական գնումների գործակալություն» ՊՈԱԿ-ն (պատվիրատու) ՊԳԳ - ՄԲՇՁԲ - 07/22 ծածկագրով կազմակերպում է մրցակցային բանակցություններ՝ **Երեւանի քաղաքապետարանի կարիքների համար Երեւան քաղաքի Արցախի փողոցի /Կայարանամերձ հրապարակից-Արին Բերդի փողոց ընկած հատված/ վերակառուցման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով:** Հրավեր ստանալու համար անհրաժեշտ է 700 ՀՀ դրամ փոխանցել «Արբինինվեստբանկ» «Բեջ-գալ» ՍՊԸ -ի 247230066158 հաշվեհամարին եւ սույն հայտարարության հրապարակման **օրվան** հաջորդող 8 աշխատանքային օրվա ընթացքում դիմել պատվիրատուին հետեւյալ հասցեով՝ ք.Երեւան, Կոմիտասի պ., 54/բ, հեռ. 28-93-25, հանձնաժողովի քարտուղար՝ Կ. Դանիելյանին:

Հրավերն **անձին** տվյալ է անձը հաստատող փաստաթղթի, իսկ **կազմ**ակերպության անունից հանդես գալու դեպքում՝ նաեւ անձի լիազորությունները հավաստող համապատասխան փաստաթղթի հիման վրա: Հայտերը պետք է ներկայացնել մինչեւ դրանց բացման պահը՝ մրցակցային բանակցությունների հայտարարության հրապարակման օրվան **հաջ**որդող օրվանից հաշված 10-րդ աշխատանքային օրը **ժամը** 12.00-ն:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«Պետական գնումների գործակալություն» ՊՈԱԿ-ն (պատվիրատու) ՊԳԳ - ԳՀԱՇՁԲ - 07/38 ծածկագրով կազմակերպում է գնանշման հարցում՝ **ՀՀ կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կարիքների համար Մարաբ տարածային սեռաբաժանման վարչական շենքի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով:** Հրավեր ստանալու համար անհրաժեշտ է 1500.0 ՀՀ դրամ փոխանցել «Արբինինվեստբանկ» էրեբունու մասնաճյուղ ՀՀ 247230066158 «Բեջ-գալ» ՍՊԸ-ին եւ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող 8 աշխատանքային օրվա ընթացքում դիմել պատվիրատուին հետեւյալ հասցեով՝ ք.Երեւան, Կոմիտասի պ., 54/բ, հեռ. 28-93-25, Գ.Մարկոսյանին:

Հրավերն անձին տվյալ է անձը հաստատող փաստաթղթի, իսկ կազմակերպության անունից հանդես գալու դեպքում՝ նաեւ անձի լիազորությունները հավաստող համապատասխան փաստաթղթի հիման վրա: Հայտերը պետք է ներկայացնել մինչեւ դրանց բացման պահը՝ գնանշման հարցման **հայտարարության հրապարակման** օրվան հաջորդող օրվանից հաշված 10-րդ աշխատանքային օրը, ժամը 11:00:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Պետական գնումների գործակալություն» ՊՈԱԿ-ն (պատվիրատու) «ՊԳԳ-ՄԲԱՇՁԲ-07/134» ծածկագրով կազմակերպում է մրցակցային բանակցություններ՝ **«Երեւան քաղաքի Արցախի փողոցի /Կայարանամերձ հրապարակից Արին Բերդի փողոց ընկած հատված/ վերակառուցման աշխատանքների /մաս 1/» ձեռքբերման նպատակով:** Հրավեր ստանալու համար անհրաժեշտ է 3665 ՀՀ դրամ փոխանցել «Արբինինվեստբանկ» էրեբունու մասնաճյուղ «Բեջ-գալ» ՍՊԸ-ի N 247230066158 հաշվեհամարին եւ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող 8 աշխատանքային օրվա ընթացքում դիմել պատվիրատուին հետեւյալ հասցեով՝ ք.Երեւան, Կոմիտասի պ., 54/բ, հեռ. 28-93-25, հանձնաժողովի քարտուղար Զ. Մելիքսեթյանին:

Հրավերն անձին տվյալ է անձը հաստատող փաստաթղթի, իսկ կազմակերպության անունից հանդես գալու դեպքում՝ նաեւ անձի լիազորությունները հավաստող համապատասխան փաստաթղթի հիման վրա: Հայտերը պետք է ներկայացնել մինչեւ դրանց բացման պահը՝ մրցակցային բանակցությունների հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվանից հաշված 10-րդ աշխատանքային օրը, ժամը 10.00-ն:

Սերգեյ Գալոյանը շնորհավորում է սիրելի

Լիլիթին՝

ծննդյան օրվա կապակցությամբ, ցանկանում նրան երջանկություն եւ քաջառողջություն:

• • • • • • • • • • • • • • •

Սերգեյ Գալոյանը շնորհավորում է իր բարեկամ **Գագիկ Սուքիասյանին՝** ծննդյան օրվա կապակցությամբ, ցանկանում երջանկություն, հաջողություն եւ քաջառողջություն:

«ՖԼՈՐԵՍ» ՍՊՈՐՏԻ ՏՈՒՆ ՍՊԸ-Ն Երեւանի «Ադամանդ» ապրանքահումքային բորսայի հարթակում կազմակերպում է «ԱՌԵԿՍԻՄԲԱՆԿ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված գույքի աճուրդային վաճառքը՝

1. Հողամաս, ընդ. մակերեսը 0,41 հա: Մեկնարկային գինը՝ 3.000.000 դրամ:
2. Հողամաս, ընդ. մակերեսը 0,80 հա: Մեկնարկային գինը՝ 5.000.000 դրամ
   Հասցե՝ ՀՀ Արագածոտնի մարզ, Սաղմոսավան գյուղ:
3. Վարելահող, ընդ. մակերեսը 0,178 հա: Մեկնարկային գինը՝ 1.600.000 դրամ
   Հասցե՝ ՀՀ Արագածոտնի մարզ, Օշական համայնք:
4. Վարելահող, ընդ. մակերեսը 0,117 հա: Մեկնարկային գինը՝ 2.000.000 դրամ
   Հասցե՝ ՀՀ Արագածոտնի մարզ, Ագարակ համայնք:
5. Վարելահող, ընդ. մակերեսը 0,42 հա: Մեկնարկային գինը՝ 3.700.000 դրամ
   Հասցե՝ ՀՀ Արագածոտնի մարզ, Ագարակ համայնք:

Աճուրդի փուլերը՝ դասական, այնուհետեւ հոլանդական եղանակով. 01.10.2007 թ.-ից յուրաքանչյուր երկուշաբթի, չորեքշաբթի եւ ուրբաթ, ժ. 13.00, մինչեւ 30.12.2007 թ.-ը՝ Երեւան, Ագաթանգեղոսի 6/1 հասցեում: Տեղեկությունների համար դիմել Բորսա՝ հեռ. 56-31-15, 56-52-28:

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության ՀՀ ջրային տեսչության կառավարման գործակալության կողմից՝ ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների համաձայն, ծանուցվում է **ՀՀ Արմավիրի մարզի Հոգեւավան համայնքից Գեղաշեն համայնքին Կարատաղ Բաղաբերդին 85 լիտր/վ, Արեւաբույր համայնքից Նարինջ Գետափնին 85 լիտր/վ եւ Սասնա հարթից Սարամեջ հանդեսին 85 լիտր/վ, Ինչպես նաեւ Դալար համայնքից Արագիլ Հովհաննեսին** ոռոգման նպատակով 6 լիտր/վ ջրաքանակի ժամանակավոր թույլտվության նախագիծ:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին ժամը 17-18-ը դիմել ՀՀ ջրային տեսչության կառավարման գործակալություն (հասցեն՝ Կասավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակայնության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2007 թ. սեպտեմբերի 7-ին, ժամը 16-ին Կասավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

ՀՀ ջրային տեսչության կառավարման գործակալություն

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Սեպտեմբերի 7-ին, ժամը 14-ին **ՀՀ բնապահպանության նախարարությունը, հարգելի Ժ. Ջհանգիրյանը, Սեւանի հաղորդակցության կազմակերպում են հասարակական լսումներ Սեւան խաղի հարավ-արեւելյան լճափնյա հատվածում նախատեսվող հանգստի գոտու շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ:** Նախագծային փաստաթղթերին կարելի է ծանոթանալ Երեւան, Կոմիտասի 29 հասցեում:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Սեպտեմբերի 11-ին, ժամը 14-ին **ՀՀ բնապահպանության նախարարությունը, «Երեբունի Պլազա» ՍՊԸ-ն** կազմակերպում են հասարակական լսումներ Երեւանում Վազգեն Սարգսյան 26/1 հասցեում գտնվող բազմաֆունկցիոնալ հասարակական կենտրոնի վերակառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ: Նախագծային փաստաթղթերին կարելի է ծանոթանալ Երեւան, Կոմիտասի 29 հասցեում:

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության ՀՀ ջրային տեսչության կառավարման գործակալության կողմից՝ ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների համաձայն, ծանուցվում է ՀՀ Արմավիրի մարզի Արեւշատ համայնքի գործարկվող ջրաքանակների ժամանակավոր թույլտվության նախագծի վերանայման նպատակով ձկնաբուծության համար ՕԱՁ հանձնվելիք **Սարիսն Սազարյանին** 40 լիտր/վ, **Տիգրան** հանձնվելիք **Սամ Ներսիսյանին** 107 լիտր/վ, **Էջմիածնի** տարածաշրջանում Վարդան Միրզախանյանին 23 լիտր/վ, **Գրիգոր** հանձնվելիք **Արթուր Աղաջանյանին** 107 լիտր/վ, **Արմեն** հանձնվելիք **Դավիթ Սարգսյանին** 122 լիտր/վ եւ **Տիգրան** հանձնվելիք **Հարություն Սկեռչյանին** 128 լիտր/վ ջրաքանակների ջրաքանակների թույլտվության նախագծերը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին ժամը 17-18-ը դիմել ՀՀ ջրային տեսչության կառավարման գործակալություն (հասցեն՝ Կասավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակայնության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2007 թ. սեպտեմբերի 6-ին, ժամը 16-ին Կասավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

ՀՀ ջրային տեսչության կառավարման գործակալություն

RECRUITING
PUBLIC OUTREACH AND TRAINING ASSISTANT

PA Government Services, Inc. is accepting applications from qualified candidates for the post of **"Public Outreach & Training Assistant"** for the USAID Water Program. Position to be filled by September 20, 2007 for an initial period of 5 months, with possible extension, and may be part or full-time.

To apply by September 10, 2007:
For the detailed job announcement visit http://paconsulting.am/water/
Please e-mail a cover letter and CV to office@paconsulting.am or fax at 586013.

www.azg.am

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության ՀՀ ջրային տեսչության կառավարման գործակալության կողմից՝ ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների համաձայն, ծանուցվում է **ՀՀ Արմավիրի մարզի Կողբավան համայնքում գտնվող «Սարի Սմիթ» ՍՊԸ-ին** ձեռնարկական նպատակով սարերկրյա ջրային տեսուրից 0,23 լիտր/վ եւ ՀՀ Շիրակի մարզի Սարմաշեն համայնքի վարչական տարածքում գտնվող «Էլբիս» ՍՊԸ-ի կողմից Սիսարյան գետի վրա ՓՀԷԿ-ի կառուցման ջրօգտագործման թույլտվության նախագծերը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին ժամը 17-18-ը դիմել ՀՀ ջրային տեսչության կառավարման գործակալություն (հասցեն՝ Կասավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակայնության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2007 թ. սեպտեմբերի 6-ին, ժամը 16-ին Կասավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

ՀՀ ջրային տեսչության կառավարման գործակալություն

ՕՐՎԱԳԻՐ ՀԱՄԱՐ ՅԱԵՔՍՇԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատվական գործունեությունն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրված՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Ավետիսեան: Տիրաժ՝ 3000, ստորագրած է տպագրության՝ 30.08.2007, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում՝ Արշակունյաց 2